

ՀԱԳՄՉ 02.10

Առաջին հրատարակություն
1 օգոստոսի 2007թ.

Ականազերծման գործողությունների ծրագրի հիմնադրման ուղեցույց

Տնօրեն,
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ),
2 United Nations Plaza, DC2-0650
New York, NY 10017
USA

Էլ. Փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498
Կայքէջ՝ www.mineactionstandards.org

Նախագրուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/> կամ ՄԱԿԱԾ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>):

Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱԾ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)
2 United Nations Plaza, DC2-0650
New York, NY 10017
ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498

Բովանդակություն

Բովանդակություն	3
Ներածություն	6
Հակաականային գործունեության ծրագրի հիմնադրման ուղեցույց	7
1. Ծավալ.....	7
2. Փաստաթղթեր	7
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	7
4. Հակաականային գործունեության ծրագրի անհրաժեշտության սահմանում	8
4.1. Ազգային կառավարություն.....	8
4.2. Երկրի կողմից նախաձեռնվող ծրագիր	8
4.3. ՄԱԿ-ի կողմից աջակցվող ծրագրեր	8
5. Հակաականային գործունեության ծրագրի նախաձեռնման նկատառումներ	9
5.1. Հակաականային գործունեության ընդհանուր գնահատում	9
5.2. Ազգային պայմաններ	10
5.3. Իրականացնող գործակալություններ	10
5.4. Ֆինանսավորում	11
5.5. Տեղում ստեղծված ծրագրեր.....	11
5.5.1. ՄԱԿ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրեր.....	11
5.5.2. ՄԱԿ-ի գլխավորությամբ իրականացվող ծրագրեր	12
5.5.3. Իրականացնող գործակալություններ	12
5.5.4. Իրեղեն օգնություն	12
5.6. Անձնակազմի պահանջներ	12
5.6.1. Ուսուցում	12
6. Հակաականային գործունեության կանոնակարգում, կառավարում և համակարգում .	13
6.1. Կառավարում և համակարգում	13
6.2. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)	13
6.3. Հակաականային գործողությունների ազգային կենտրոն (ՀԱԿ).....	14
7. ՀԱԿ-ի կազմակերպումը	15
8. Տարածքային պահանջներ	15
9. Օժանդակ մարմիններ.....	15
10. Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչների (ՀԱԳՄՉ) կիրառումը	16
11. Պարտավորություններ.....	16
11.1 Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)	16
11.2 Հակաականային գործողությունների կենտրոն (ՀԱԿ)	17
11.3 Միավորված ազգերի կազմակերպություն.....	18
Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր.....	20
Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ.....	22
Հավելված Գ (Տեղեկատվական) Մովորական ՀԱԿ-ի ընդհանուր կազմակերպում	27
Հավելված Դ (Տեղեկատվական) ՀԱԿ-ի հիմնադրման համար անձնակազմի հատկանշական պահանջներ	28
Հավելված Ե (Տեղեկատվական) ՀԱԿ-ի գործառնական բաղադրիչները	31
E.1. ՀԱԿ-ի տնօրեն	31

E.1.1.	ՀԱԿ-ի սկզբնական ստեղծում.....	31
E1.2.	Հիմնադրված ՀԱԿ	31
E.1.3.	Հիմնադրված ԱԳԱՄ-ի առկայությունը.....	32
E.2.	Ռազմավարական կառավարման բաժին.....	33
E.3.	Իրավաբանական բաժին.....	33
E.4.	Գործողությունների բաժին.....	34
E.4.1.	ՈԱ/ՈՀ ենթաբաժին.....	36
E.4.2.	Տեղեկությունների կառավարման և ԱՏՀ-ի ենթաբաժին.....	37
E.4.3.	Աջակցություն տուժածներին.....	37
E.4.4.	Համայնքային փոխգործակցություն	38
E.4.5.	Ականների վտանգի մասին իրազեկում (ԱՎԻ)	39
E.4.6.	Պլանավորում և ընթացիկ գործողություններ	39
E.4.7.	Ականներ հայտնաբերող շներ (ԱՀՇ), մեխանիկական և պահուստային ռեզերվների ոչնչացում	39
E.4.8.	Կապի կենտրոն.....	40
E.5.	Օժանդակ ծառայություններ.....	40
E.5.1.	Թիկունքի ենթաբաժին.....	40
E.5.2.	Անձնակազմ/Վարչարարություն	40
E.5.3.	Ֆինանսներ.....	41
E.5.4.	Օժանդակ այլ գործառույթներ	41
	Փոփոխությունների գրանցում	42

Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչներն առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելաճանաչների և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org/> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

Ներածություն

Հակաականային գործունեության ծրագրերը կարող են լինել ՄԱԿ-ի կողմից ղեկավարած հակաականային գործունեության ծրագրեր, որոնք ստեղծվել են արտակարգ իրավիճակներում մարդասիրական օգնության կամ խաղաղապահ գործողությունների համատեքստում; դրանք կարող են նաև լինել ՄԱԿ-ի կողմից աջակցված ծրագրեր, որոնք ստեղծվել են հակամարտությանը հաջորդող անցումային շրջանում կամ էլ կարող են պետության կողմից հիմնված և կառավարվող ծրագրեր լինել՝ ի պատասխան հակաականային գործունեության հայտնաբերված կարիքի: Անկախ այն փաստից, թե ինչպես է հիմնվել հակաականային գործունեության ծրագիրը, գոյություն ունեն որոշակի կարևոր հանգամանքներ, որոնք համընդհանուր են հակաականային գործունեության բոլոր ծրագրերի հիմնադրման համար:

Տվյալ չափորոշիչը նպատակ ունի խթանելու հակաականային գործունեության ծրագրի հիմնադրման գործում այդ կարևոր հանգամանքների ըմբռնումը՝ աջակցելու կառավարությանը և այլ կազմակերպություններին, որոնք ներգրավված են հակաականային գործունեության ծրագրի հիմնադրման գործում:

Հակաականային գործունեության ծրագրի հիմնադրման ուղեցույց

1. Ծավալ

Սույն չափորոշիչն ուղեցույց և գործունեություններ է ապահովում, որոնք պետք է հաշվի առնել՝ հակաականային գործունեության ծրագիրը կազմելիս:

2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ փաստաթղթերը կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղեցույցի դրույթների մի մասը:

3. Տերմիններ, սահմանումներ և հասկացվումներ

Հավելված Բ-ում բերված է սույն ուղեցույցում կիրառված տերմինների, սահմանումների և հասկացվումների ցանկը: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հասկացվումների ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղեցույցների լեզվի հետ:

ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու համար այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն՝ չափորոշիչին ամբողջությամբ բավարարելու համար:

բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար:

գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

“Հակաականային գործունեության ծրագիր” տերմինը վերաբերում է հակաականային գործունեության մի խումբ ծրագրերին, որոնք կառավարվում են կենտրոնական գործակալության կողմից, օրինակ՝ Ականազերծման գործողություններ ազգային մարմնի (ԱԳԱՄ) կամ Հակաականային գործունեության կենտրոնի (ՀԱԿ) կողմից:

“Դոնոր” տերմինը նշանակում է որպես ֆինանսավորման աղբյուր գործող որևէ գործակալություն, այդ թվում նաև ականապատված երկրների կառավարությունը:

«Ականազերծման գործողությունների ազգային մարմին կամ մարմիններ» (ԱԳԱՄ) տերմինը վերաբերում է ականապատ տարածքներ ունեցող բոլոր այն երկրների պետական գերատեսչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնց պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ականազերծման գործողությունները: Հիմնականում Ականազերծման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից հակաականային բոլոր գործողությունների պարագայում: Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ այլ ճանաչված միջազգային կառույցը կարող է հարմար կամ անհրաժեշտ գտնել ստանձնելու ԱԳԱՄ-ի բոլոր պատասխանատվությունները կամ դրանց մի մասը և իրականացնել բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը:

4. Հակաականային գործունեության ծրագրի անհրաժեշտության սահմանում

4.1. Ազգային կառավարություն

Ցանկացած երկրում ականների խնդիրն ազգային կառավարության պատասխանատվությունն է (այնտեղ, ուր առկա է գործող կառավարությունը): Կառավարությունը կամ դրա կողմից նշանակված գործակալությունը պետք է ներգրավված լինի հակաականային գործունեության ազգային ծրագրի պլանավորման աշխատանքներում, և այդ ծրագիրը չպետք է մեկնարկի առանց ազգային կառավարության հրավերի կամ համաձայնության:

Այնուամենայնիվ, մարդասիրական արտակարգ իրավիճակների կամ խաղաղապահ գործողությունների դեպքում հակաականային գործունեության ծրագիրը կարող է հիմնադրվել որպես ՄԱԿ-ի մանդատի մի բաղկացուցիչ մաս՝ առանց կառավարության համաձայնության, թեև այնտեղ, ուր գոյություն ունի լիիրավ կառավարություն, փորձեր պետք է կատարվեն համաձայնություն ձեռք բերելու ուղղությամբ:

Եթե առկա է գործող կառավարությունը, ՄԱԿ-ը պետք է պաշտոնական մանդատ ձեռք բերի այդ կառավարությունից՝ հակաականային գործունեության ծրագրի կառավարումը շարունակելու և սպառնալից, որպեսզի հակաականային գործունեության ծրագրի պատասխանատվությունը հնարավորինս շուտ փոխանցվի կառավարությանը:

Այնուամենայնիվ, հակաականային գործողությունների առանձին նախագծեր դեռ կարող են նախաձեռնվել և իրագործվել՝ առանց հակաականային գործողությունների ազգային ծրագրի հիմնադրման:

4.2. Երկրի կողմից նախաձեռնվող ծրագիր

Ցանկացած կառավարություն կարող է որոշում կայացնել հակաականային գործողությունների իր սեփական ծրագրի մեկնարկի մասին՝ առանց ՄԱԿ-ի կամ որևէ այլ միջազգային կազմակերպության աջակցության: Սույն որոշման հիմքում կարող է հակաականային գործունեության հայտնաբերված որևէ կարիքը լինել կամ միջազգային դաշինքներին կամ կոնվենցիաներին համապատասխանելու կարիքը: Նման դաշինքների կամ կոնվենցիաների թվին են պատկանում Հակահետևակային ականների արգելման 1997թ-ի կոնվենցիան (ՀՀԱԱԿ) կամ Օտտավայի կոնվենցիան), Փոփոխված Արձանագրություն II-ը՝ Ականների, ծուղակ ականների և այլ սարքերի գործածման արգելման կամ սահմանափակումների վերաբերյալ և ՄԱԿ-ի սովորական զինամթերքի կոնվենցիայի Արձանագրություն V-ը՝ ՊՊՄ-ների վերաբերյալ:

4.3. ՄԱԿ-ի կողմից աջակցվող ծրագրեր

Ցանկացած որոշում ՄԱԿ-ի կողմից ղեկավարվող կամ աջակցվող հակաականային գործունեության ծրագրի կարիքի վերաբերյալ պետք է սկիզբ առնի երկրի իրավիճակի պաշտոնական գնահատումից, այդ թվում կարող է լինել նաև գնահատման առաքելությամբ այցելություն դեպի այդ երկիր՝ սեփական փորձից ելնելով պարզելու հակաականային գործունեության ծավալն ու ազդեցությունը: Տե՛ս ՀԱԳՄՉ 08.10-ը հակաականային գործունեության ընդհանուր գնահատման վերաբերյալ և ՀԱԳՄՉ 05.10-ը՝ գնահատման առաքելությամբ այցելությունների տեղեկատվության կառավարման ասպեկտների վերաբերյալ:

Երկրի գնահատումը պետք է պարզաբանի, արդյոք պահանջվում է հակաակնային գործունեության ազգային ծրագիրը, և արդյոք նման ծրագիրը հնարավոր է: Լիարժեք պետք է ուսումնասիրվի հակաակնային գործունեության ցանկացած ընթացիկ գործունեությանը, այդ թվում նաև նրանց, որոնք համայնքներում են տեղի ունենում:

ՄԱԿ-ի կողմից աջակցվող հակաակնային գործունեության ծրագրի մշակման մասին որոշումը հավաքագրված բավարար տեղեկատվության արդյունքը կլինի, որը կապացուցի նման կարիքի անհրաժեշտությունը:

5. Հակաակնային գործունեության ծրագրի նախաձեռնման նկատառումներ

5.1. Հակաակնային գործունեության ընդհանուր գնահատում

Հակաակնային գործունեության ծրագիր նախաձեռնելու մասին որոշման հիմքում ընկած կլինեն հակաակնային գործունեության պարզաբանված կարիքները, որոնք սահմանվել են ազգային իշխանության կամ ՄԱԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա: Այս փուլում հակաակնային գործունեության կարիքների ողջ ծավալն ու շրջանակը դեռ հայտնի չի լինի, և ծրագրի պլանավորումը պետք է լավագույնս իրականացվի՝ առկա տեղեկատվության օգնությամբ:

Նման պլանավորումը պետք է ապահովի, որ տեղեկությունների հավաքագրումն ու վերլուծությունն իրականացվի գործնականորեն հնարավորինս կարճ ժամանակահատվածում, որպեսզի տեղի ունենա ականների խնդրի վերաբերյալ, ինչպես նաև համայնքների և մարդասիրական ու զարգացման գործողությունների վրա անդրադարձող դրանց ազդեցության վերաբերյալ բազմակողմանի գնահատումը: Այս գնահատումը կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են, օրինակ, արտակարգ իրավիճակների ուսումնասիրությունը, Ականների ազդեցության հետազոտությունը (ԱԱՀ) և Ականների վտանգի մասին իրազեկման (ԱՎԻ) կարիքների գնահատումը:

Ազգային պայմանները, որոնք ստորև կքննարկվեն 5.2 բաժնում, խորապես կազդեն գնահատման ծավալի և շրջանակի վրա: Հակաակնային գործունեության ընդհանուր գնահատման համար տես ՀԱԳՄՉ 08.10-ը, իսկ արտակարգ իրավիճակների ուսումնասիրության և ԱԱՀ-ի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար՝ տես ՀԱԳՄՉ 05.10-ը: ԱՎԻ կարիքների գնահատման մանրամասների համար տես ՀԱԳՄՉ 08.50-ը:

Այս գնահատման միջոցով հավաքագրված տեղեկատվությունը հետագայում կնպաստի հակաակնային գործունեության միջամտման կարիքների պարզաբանմանը, ինչպես նաև կանոնակարգման, կառավարման և համակարգման պահանջների ու այն միջոցների պարզաբանմանը, որոնք անհրաժեշտ են աշխատանքներն իրականացնելու համար: Այս տեղեկատվությունը կնպաստի նաև հակաակնային գործունեության ազգային քաղաքականության և ռազմավարության ստեղծմանը, որոնք կապված կլինեն մարդասիրական և զարգացման ազգային գերակայությունների հետ:

Ականների խնդրի իրական խորությունը կարող է դժվար գնահատելի լինել, և տեղեկությունների հավաքագրումը, մշակումը, վերլուծությունը, պահպանումն ու կիրառումը պարտադիր են ծրագրի ողջ ընթացքում:

5.2. Ազգային պայմաններ

Ազգային որոշակի պայմաններ ազդում են մարդասիրական, զարգացման և հակաականային գործունեության գործողությունների իրականացման ունակության վրա: Հակաականային գործունեության ծրագրի հիմնադրման ժամանակ սովորաբար առկա են լինում հետևյալ պայմանները՝

- ա. ենթակառուցվածքը վատ վիճակում է՝ խափանելով երկրի այլ մասերի և էական ծառայությունների կամ պարագաների ապահովման հասանելիությունը, օրինակ՝ կապ, բժշկական օգնություն, էլեկտրաէներգիա, սնունդ և ջուր;
- բ. անվտանգության իրավիճակը կարող է անկայուն լինել; սա կարող է տեղայնացված կամ լայնորեն տարածված լինել; կարող է ներքին տեղահանված մարդկանց մեծ զանգված լինել; ականների և ՊՊՄ-ների հետևանքների ավելի խորը պատկերացումը տեղի է ունենում, երբ սկսվում է վերաբնակեցումը;
- գ. հակաականային գործունեության, մարդասիրական և զարգացման այլ կազմակերպությունները դեռ ամբողջությամբ չեն ձևավորվել;
- դ. կարող է գոյություն չունենալ գործող կենտրոնացված կառավարական մարմին;
- ե. գոյություն չունի գործող ազգային իշխանություն:

Այն վայրերում, որտեղ այսպիսի պայմաններն ազդում են հակաականային գործունեության ծրագրի հիմնադրման վրա, նախնական պլաններ պետք է ձեռնարկվեն ծրագիրը ստեղծելու այնպիսի ռեսուրսներով, որոնցով կկառավարվեն հակաականային գործունեության անհետաձգելի գերակայության առաջադրանքներն այն գոտիներում, որտեղ անվտանգության իրավիճակն ու ենթակառուցվածքը թույլ են տալիս: Գերակայությունները պետք է կենտրոնացված լինեն ականներից տուժածների և ԱՎԻ-ի վրա և որոշ սահմանափակությամբ ականների մաքրման վրա՝ ի սատարում աջակցության գործակալություններին և մարդասիրական օգնության աշխատանքներին:

Այնուհետև հետագա պլաններ պետք է մշակվեն, որպեսզի ազգային պայմանների բարելավման դեպքում ծրագիրն ընդունակ լինի արագորեն ընդարձակել հակաականային գործողությունները հասանելի դարձած նոր գոտիներում:

5.3. Իրականացնող գործակալություններ

Հակաականային գործողությունները կարող են իրականացվել՝

- ա. առևտրային կազմակերպությունների կողմից;
- բ. ազգային կամ միջազգային ոչ պետական/հասարակական կազմակերպությունների կողմից (ՀԿ-ներ);
- գ. պետական կազմակերպությունների կողմից, օրինակ՝ զինվորական;
- դ. ՄԱԿ-ի գործակալությունների կողմից, օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ (UNICEF) (ներգրավված է Ականների վտանգի իրազեկման գործում (ԱՎԻ));
- ե. ազգային կառույցի բուն աշխատակիցների կողմից, լինի դա ՄԱԿ-ը, ԱԳԱՄ-ը կամ ազգային ՀԱԿ-ը:

Բավականին հավանական է, որ տեղի ունենա իրականացնող կազմակերպությունների միավորում:

Պլանավորման ժամանակ անհրաժեշտ է որոշակի պատկերացում ունենալ, թե ինչպես են իրականացվելու հակաականային գործողությունները, որպեսզի հնարավոր լինի որոշել հակաականային գործունեության կանոնակարգման, կառավարման և համակարգման կազմակերպչական և գույքային պահանջները: Այս պատկերացումը նպաստում է նաև ցանկացած օրենսդրական կամ կանոնակարգող պահանջների սահմանմանը: Օրինակ, եթե պայմանագրային հակաականային գործունեություն պետք է իրականացվի, ապա ծրագրում պետք է ձևավորվի պայմանագրեր կառավարելու կարողություն: Հակաակա-նա-յին գործունեության պայմանագրերի մշակման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկությունների համար տես ՀԱԳՄՉ 07.20 ուղեցույցը: Որպես այլընտրանք, եթե պետական կազմակերպություններն են իրականացնելու հակաականային գործունեությունը (օրինակ՝ զինվորական կազմակերպությունները), ապա տվյալ դեպքում հակաականային գործունեությունը կարող է իրականացվել գոյություն ունեցող կազմակերպությունների կողմից, որոնք կառավարվում են առկա կանոնակարգերով:

Ընդունված տարբերակ է, որ երկրում հիմնադրված լինեն և գործեն մարդասիրական, զարգացման և հակաականային գործունեության կազմակերպությունները՝ նախքան հակաականային գործունեության ծրագրի ստեղծումը: Նման դեպքերում ուշադրություն պետք է հատկացվի հակաականային գործունեության ներկայիս կազմակերպությունների ինտեգրմանն այդ ծրագրում և մարդասիրական ու զարգացման կազմակերպությունների հակաականային գործունեության առաջնահերթ կարիքների բավարարմանը:

5.4. Ֆինանսավորում

Հակաականային որևէ գործունեություն չի կարող տեղի ունենալ առանց անհրաժեշտ ֆինանսական օգնության, որը պետք է հոգա իրականացնող գործակալությունների և կառավարման ու համակարգման գործակալությունների ծախսերը:

5.5. Տեղում ստեղծված ծրագրեր

Տեղում ստեղծված ծրագրերի համար ազգային մարմինը պետք է անհրաժեշտ միջոցներ տրամադրի կամ ազգային աղբյուրներից, կամ էլ արտաքին դոնորներից ու վարկերից: ՄԱԿ-ի Հոգաբարձուների կամավոր հիմնադրամը (ՄԱԿ ՀԿՀ) կարող է աջակցել ազգային ծրագրերին սկզբնական ֆինանսավորմամբ, ինչպես նաև կա ևս մեկ այլ տարբերակ՝ ազգային ծրագրի կողմից հիմնադրել հակաականային գործողությունների հոգաբարձուների իր սեփական հիմնադրամը: Շատ երկրների կառավարություններ պատրաստ են երկկողմանի հիմունքներով ֆինանսապես աջակցելու հակաականային գործունեությանը:

5.5.1. ՄԱԿ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրեր

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրը (ՄԱԿԶՕ) հաճախ ի վիճակի է սկզբնական ֆինանսավորում տրամադրել իր սեփական ծախսերի համար և որոշակի սահմանափակ ֆինանսավորում՝ հակաականային գործողությունների համար; այնուամենայնիվ, ՄԱԿԶՕ-ի դերն է սովորաբար աջակցել ազգային ծրագրերին մոբիլիզացնելու իրենց սեփական ռեսուրսները, այլ ոչ թե միջոցներ տրամադրել: ՄԱԿԶՕ-ն կարող է նաև աջակցել ազգային հոգաբարձու հիմնադրամների կառավարման գործում:

5.5.2. ՄԱԿ-ի գլխավորությամբ իրականացվող ծրագրեր

Միավորված ազգերի կազմակերպության Ականազերծման ծառայությունը (ՄԱԿԱԾ) որպես ՀԿՀ-ի վերահսկող մարմին պատասխանատու է իր սեփական ֆինանսավորման կազմակերպման համար, ինչպես նաև ՄԱԿ-ի կողմից գլխավորած ծրագրերի ֆինանսավորման համար: Մակայն ծրագրի լիարժեք ծախսերի համար դեռ լրացուցիչ դոնորական ֆինանսավորման կարիք կարող է լինել:

5.5.3. Իրականացնող գործակալություններ

Իրականացնող բազմաթիվ գործակալություններ, ինչպիսիքն են միջազգային ՀԿ-ները, կազմակերպում են իրենց սեփական ֆինանսավորումը՝ չնայած դրանց մի մասը հույսեր է կապում ազգային կամ ՄԱԿ-ի ֆինանսավորման հետ:

5.5.4. Իրեղեն օգնություն

Որոշ դեպքերում դոնորների կողմից իրեղեն օգնություն կարող է տրամադրվել ուղղակի ֆինանսավորման փոխարեն: Իրեղեն օգնությունը կարող է ներառել մասնագիտացված անձնակազմի, սարքավորումների, նյութերի կամ գույքի/հարմարությունների տրամադրում՝ հակաականային գործունեության ծրագրին աջակցելու համար:

5.6. Անձնակազմի պահանջներ

Հակաականային գործողությունների ծրագրի հիմնադրման համար էական նշանակություն ունի որակավորում ունեցող անձնակազմի առկայությունը թե գործառնական մակարդակում՝ հակաականային գործողություններն իրականացնելու համար և թե ԱԳԱՄ/ՀԱԿ-ի մակարդակում՝ հակաականային գործունեությունը կառավարելու և դրան սատարելու համար: Անձնակազմի պահանջների վերաբերյալ նկատառումները պետք է ընդգրկված լինեն հակաականային գործունեության ծրագրի հիմնադրման պլանավորման մեջ: Հավելված Գ-ում զետեղված է ՀԱԿ-ի հիմնադրման համար անձնակազմի հատկանշական պահանջների ընդհանուր ամփոփ ցանկը:

5.6.1. Ուսուցում

Ուսուցումն անհրաժեշտ է ողջ անձնակազմի համար, լինի դա պաշտոնական ուսուցում, աշխատանքի բովանդակության ուսուցում, թարմացման նպատակով ուսուցում կամ նոր սարքավորումների, համակարգերի կամ ընթացակարգերի վերաբերյալ շարունակական ուսուցում: Կազմակերպության և հակաականային գործունեության անձնակազմի ու մասնագիտացած խմբերի (օրինակ՝ ԱՀՇ) վերապատրաստման կարիքները պետք է հաշվի առնվեն որպես ծրագրի պլանավորման մի մաս: ՀԱԳՄՉ 06.10-ը խորացված ուղեցույց է վերապատրաստման կազմակերպման վերաբերյալ:

6. Հակաականային գործունեության կանոնակարգում, կառավարում և համակարգում

6.1. Կառավարում և համակարգում

Սովորաբար հակաականային գործունեության ծրագրի կանոնակարգումը, կառավարումն ու համակարգումն իրականացվում են երկու մակարդակներում: Ականազերծման գործողությունների ազգային կառույցը (ԱԳԱՄ) պատասխանատու է հակաականային գործունեության լայնածավալ ռազմավարության և քաղաքականության որոշումների համար, իսկ Հակաականային գործողությունների կենտրոնը (ՀԱԿ) պատասխանատու է առօրյա կառավարման համար, իսկ որոշ դեպքերում՝ հակաականային գործողությունների նախագծերի իրականացման համար: Կառավարման երկու մակարդակները կարող են համակցված լինել մեկ կազմակերպությունում, սակայն բնական է, որ դրանք լինեն առանձին հաստատություններ:

Կատարյալ տարբերակում ԱԳԱՄ-ն ու ՀԱԿ-ը պետք է հիմնադրված լինեն ազգային օրենսդրությամբ, որը նաև կանոնակարգում է ականազերծման գործողությունները: Օրենսդրությունը պետք է հաստատի, թե կառավարության որ նախարարությունը կամ վարչությունը կամ գործադիր մարմինը պետք է վերահսկի կամ պատասխանատու լինի ԱԳԱՄ-ի գործողությունների համար, ինչպես նաև սահմանի այն նախարարությունները և/կամ պաշտոնյաներին, որոնք ԱԳԱՄ-ի անդամներն են լինելու: Նման մարմինները սովորաբար ընդգրկում են պաշտոնյաներ կառավարության այն նախարարություններից կամ վարչություններից, որոնք պատասխանատվություն են կրում հակաականային գործունեության որոշ կողմերի համար (օրինակ՝ պաշտպանության, կրթության, արտաքին գործերի, առողջապահության, ներքին գործերի և սոցիալական ծառայությունների նախարարություններ), և որոնց աշխատանքային ծրագրերը կարող են էապես խոչընդոտվել ականների և այլ ՊՊՄ-ների առկայությունից (օրինակ՝ գյուղատնտեսության, տրանսպորտի և էներգետիկայի նախարարություններ): Օրենսդրությունը նաև պետք է սահմանի, թե որ նախարարությունը կամ վարչությունը պետք է նախագահի ԱԳԱՄ-ի ժողովները, և որը պետք է գործի որպես ԱԳԱՄ-ի քարտուղարություն, եթե ՀԱԿ-ը չի իրագործում այս գործառնությունը: Արդյունավետորեն գործող ԱԳԱՄ-ը կարող է ներկայացուցիչներ ընդգրկել նաև միջազգային կազմակերպություններից և այլ մարմիններից կամ հակաականային գործունեության մեջ ներգրավված կազմակերպություններից:

Հնարավոր է, որ անհրաժեշտ լինի հիմնել այս կազմակերպությունները, սակայն որոշ դեպքերում, մասնավորապես համազգային ստեղծված ծրագրերում, հակաականային գործունեության պատասխանատվությունը դրվի արդեն գոյություն ունեցող կազմակերպությունների վրա: Օրինակ, եթե հակաականային գործունեությունն իրականացվում է զինվորական կազմակերպության կողմից, ապա այն կարող է քաղաքացիական կառույցի կառավարման ներքո լինել, որը հակաականային գործունեության ոլորտում գործելիս՝ հաշվետու է ԱԳԱՄ-ին:

6.2. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

Ինչպես արդեն նկարագրվել է, ԱԳԱՄ-ն այն սկզբունքային հաստատությունն է, որը պատասխանատու է ականապատված երկրում ականազերծման գործողությունների քաղաքականության մշակման, կառավարման, վերահսկման և համակարգման համար: Այնուամենայնիվ, առօրյա կառավարումը և համակարգումը սովորաբար իրականացվում են ՀԱԿ-ի կողմից որպես ԱԳԱՄ-ի գործառնական մակարդակի բաղադրիչ: ԱԳԱՄ-ի առանձնահատուկ պարտավորությունների ցանկը տես ստորև 11.1 բաժնում:

Ականազերծման գործողությունների ոչ բոլոր ծրագրերը կպահանջեն ազգային առանձին կառույցի հիմնադրում: Համազգային ստեղծված ծրագրերում ականազերծման գործողությունների կանոնակարգումը, կառավարումը և համակարգումը կարող են հանձնարարվել արդեն գոյություն ունեցող կառույցին:

ՄԱԿ-ի կողմից գլխավորած ծրագրի հիմնադրման ժամանակ ԱԳԱՄ-ի հիմնադրման համար պայմանները կարող են բացակայել, սակայն այն պահից, երբ նախապայմաններն առկա են դառնում, ՄԱԿ-ը պետք է հորդորի և աջակցի ազգային կառավարությանը ԱԳԱՄ-ի հիմնադրման գործում:

6.3. Հակաականային գործողությունների ազգային կենտրոն (ՀԱԿ)

ՀԱԿ-ն այն գործառնական մարմինն է, որը գործադրում է ԱԳԱՄ-ի կանոնակարգերը և կառավարում է ականազերծման առօրյա գործողությունները: ՀԱԿ-ը կարող է հիմնադրվել անմիջապես ԱԳԱՄ-ի կողմից կամ էլ կարող է հիմնադրվել մեկ այլ գործակալության օգնությամբ և աջակցությամբ, օրինակ՝ ՄԱԿ-ի:

Որոշ իրավիճակներում, մասնավորապես արտակարգ իրավիճակում՝ ականազերծման գործողությունների ծրագրի սկզբնական փուլում, ՀԱԿ-ը հիմնադրվում է ՄԱԿ-ի կամ միջազգային մեկ այլ մարմնի կողմից և սկզբնական շրջանում ստանձնում է ԱԳԱՄ-ի առօրյա կառավարման գործառնությունները: Այն ժամանակ, երբ կայուն պայմաններն առկա են դառնում, և ի հայտ է գալիս ճանաչված իշխող կառույցը, շեշտը պետք է դրվի թե ԱԳԱՄ-ի և թե ազգային ՀԱԿ-ի հիմնադրման վրա:

Որոշ դեպքերում, մասնավորապես ականազերծման գործողությունների ստեղծված ազգային ծրագրերում, առանձին ՀԱԿ-ի հիմնադրում կարող է չպահանջվել: Այն կառույցը, որի վրա է դրված հակաականային գործունեության կանոնակարգման, կառավարման և համակարգման պատասխանատվությունը, հնարավոր է, որ արդեն ունենա կազմակերպչական կառուցվածքներ և կանոնակարգեր՝ այդ գործառնություններն իրականացնելու համար:

ՀԱԿ-ն ինքը կարող է որոշ գործողություններ նախաձեռնել, սակայն սովորաբար այն նախարարությունների, միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների և առևտրային օպերատորների, այսինքն՝ իրականացնող գործակալությունների միջամտությունն է համակարգում: Որոշ երկրներում պահանջվող առանձնահատուկ գործողությունները տարբեր կլինեն՝ կախված դրա ականների և ՊՊՄ-ների խնդրի բնույթից: Որոշ դեպքերում ՀԱԿ-ը կարող է իր սեփական գործառնական ականազերծող թիմերն ունենալ: Այնուամենայնիվ, այս մոտեցումը կարող է պակաս արդյունավետ համարվել, քանի որ ՀԱԿ-ը կարող է բավականին կենտրոնացած լինել իր սեփական թիմերի աշխատանքի վրա և ի վիճակի չլինել արդյունավետորեն ստանձնել ազգային համակարգման իր գործառնությունները: Այն կարող է նաև շահերի բախման հանգեցնել, քանի որ ՀԱԿ-ը՝ որպես կանոնակարգող մարմին, հանդես է գալիս թե որպես դատավոր, և թե որպես խաղի մասնակից: Տես նաև վերը բերված 5.3 բաժինը՝ իրականացնող գործակալություններ:

7. ՀԱԿ-ի կազմակերպումը

Հակաականային գործունեության առանձնահատուկ գործողություններն ընդգրկում են՝ ԱՎԻ, օգնություն տուժածներին, ականագերծում, պահուստային ռեզերվների ոչնչացում և հակահետևակային ականների գործածման հակաքարոզչություն: ՀԱԿ-ի գործառնական բաղադրիչները, որոնք պահանջվում են՝ այս գործողություններից մի քանիսը կամ բոլորը կառավարելու համար, համեմատաբար չափորոշիչային են, և կարելի է սահմանել ՀԱԿ-ի ընդհանուր կազմակերպումը՝ բավարարելու այս բոլոր իրավիճակները: Նման ընդհանուր կազմակերպման օրինակը գետեղված է Հավելվածներ Գ-ում և Դ-ում: Նման ընդհանուր կազմակերպման պայմաններում, եթե ծրագրի շրջանակներում չեն իրականացվում հակաականային գործունեության որոշակի գործողություններ, ապա այդ գործողության կառավարման համար պահանջվող գործառնական բաղադրիչը հեռացվում է, սակայն հիմնական կազմակերպումը մնում է անձեռնմխելի: ՀԱԿ-ի գործառնական բաղադրիչներն առավել մանրամասնորեն քննարկվում են Հավելված Ե-ում:

8. Տարածքային պահանջներ

Հակաականային գործունեության ծրագրի հիմնադրումը պլանավորելիս՝ պետք է հաշվի առնել տարածքային պահանջները: Գրասենյակային հարմարություններ կպահանջվեն ԱԳԱՄ-ի, ազգային ՀԱԿ-ի և ականագերծման գործողությունների ցանկացած այլ տարածքային հաստատության համար: Հարմարությունները պետք է ընտրվեն՝ հաշվի առնելով ականագերծման գործողությունների ծրագրի հավանական հետագա ընդարձակումը, և ապահովեն բավականաչափ տարածքի առկայություն ներգրավված գրասենյակների գործառնական բոլոր բաղադրիչների համար:

Ուշադրություն պետք է հատկացվի նաև հավաստագրման (ԱՀՇ ստուգման տարածքներ) և վերապատրաստման (շենքեր և վերապատրաստման տարածքներ) նպատակների համար տարածքային պահանջներին, որոնք կարող են ԱՀՇ մասնագիտացված ուսուցում և մեխանիկական գործողություններ ներառել:

Պայթուցիկ նյութերի (թե պայթեցման նյութեր և թե անհրաժեշտության դեպքում ԼՊՀ և տեղափոխման համար ապահով ՉԶ) պահեստավորման պահանջներն ազգային և տարածաշրջանային մակարդակներում նույնպես պետք է հաշվի առնվեն: Անվտանգության ներկայիս իրավիճակը կարող է որպես գործոն հանդես գալ՝ այս հարմարությունների ստեղծման ժամանակ:

Հարմարություններ կարող են պահանջվել նաև ԱՊԶ առաջադրանքների համար (ազատման գոտիներ) և սարքավորումների ՓԳ համար:

9. Օժանդակ մարմիններ

Կան մի շարք միջազգային կազմակերպություններ, որոնք ականապատված երկրներին մարդասիրական և զարգացման (այդ թվում նաև ականագերծման գործողությունների ոլորտում) աջակցություն տրամադրելու ծավալուն փորձ ունեն: Այնպիսի գործակալությունները, ինչպիսիքն են ՄԱԿԱԾ, ՄԱԿԶԾ, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (UNICEF), Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ICRC), Եվրոպական հանձնաժողովը (ԵՀ) և Ամերիկյան պետությունների կազմակերպությունը (OAS), բոլորն էլ ներդրում են կատարել ականագերծման գործողությունների ազգային մի շարք ծրագրերում և հաճախ կարող են օգնություն կամ խորհրդատվություն տրամադրել: Քաղաքացիական այլ խմբերը, օրինակ՝ Մարդասիրական ականագերծման Ժնևի միջազգային կենտրոնը (ՄԱԺՄԿ) կամ ականագերծման գործողություններով զբաղվող ՀԿ-ները, ուղեցույց տրամադրելու համար նույնպես անհրաժեշտ փորձ ունեն:

10. Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչների (ՀԱԳՄՉ) կիրառումը

ՄԱԿ-ի ականագերծման ծառայությանը մանդատ էր հանձնվել չափորոշիչներ մշակելու՝ ապահովելով հակաականային գործունեության ծրագրերի պլանավորման, իրականացման և կառավարման վերաբերյալ ուղեցույցով: Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) մշակվել են՝ ականագերծման գործողությունների անվտանգությունն ու արդյունավետությունը բարելավելու նպատակով՝ ուղեցույց ապահովելու, սկզբունքներ ստեղծելու և որոշ դեպքերում միջազգային պահանջները և առանձնահատկությունները սահմանելու միջոցով: ՀԱԳՄՉ-ն նաև աջակցում են ԱԳԱՄ-ներին՝ ստեղծելու ազգային չափորոշիչներ և ազգային ՄԳԳ-ներ՝ տեղեկատվության շրջանակ սահմանելու միջոցով, որը կարող է օգտագործվել կամ հարմարեցվել օգտագործման համար որպես ազգային չափորոշիչ:

ՀԱԳՄՉ-ների ներկայիս շարքին կարելի է ծանոթանալ www.mineactionstandards.org կայքէջում և ականագերծման գործողությունների ծրագրի ստեղծման ուղի փնտրող մարմնի կամ կազմակերպությունների համար արժեքավոր տեղեկատվություն է ապահովում:

11. Պարտավորություններ

11.1 Ականագերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

ԱԳԱՄ-ը, պատասխանատու լինելով երկրում ականագերծման գործողությունների լայնածավալ ռազմավարական և քաղաքականության որոշումների համար, պարտավորություն է կրում՝

ա. ականագերծման գործողությունների օրենսդրության մշակման և դրա իրագործման վերահսկման համար;

բ. ազգային քաղաքականության, ռազմավարության, գերակայությունների և աշխատանքային պլանների սահմանման համար կամ դրանց առաջարկությունը կառավարությանը՝ նվազեցնելու ականների և ՊՊՄ-ների հետևանքները (օրինակ՝ ականագերծման գործողությունների ազգային ծրագիր);

գ. զեկուցելու կառավարությանը, հանրությանը, դոնորներին, ՄԱԿ-ին և այլ համապատասխան շահառուներին ականագերծման գործողությունների ոլորտում կատարած առաջընթացի մասին;

դ. ՀԱԿ-ի աշխատանքների վերահսկման համար;

ե. կառավարությանը խորհրդատվությամբ ապահովելու ականագերծման գործողությունների խնդիրների վերաբերյալ՝ ականագերծման գործողություններին առնչվող միջազգային համաձայնագրերը ներառյալ; այն կանոնակարգերի վերաբերյալ, որոնք ուղղություն են տալիս կառավարության վարչությունների և գործակալություններին այն քայլերի առնչությամբ, որոնք պետք է արվեն, երբ նրանց աշխատանքային ծրագրերը ենթարկվում են ականների և ՊՊՄ-ների առկայության ազդեցությանը; ինչպես նաև միջազգային դաշինքներին անդամակցելու արդյունքում ազգային կառավարությանը սպասվող պահանջների և հետևանքների վերաբերյալ;

զ. մշակելու կանոնակարգեր կամ առաջարկելու դրանք կառավարությանը, որպեսզի միջազգային զարգացման գործակալություններին (երկկողմանի դոնորներին, ՄԱԿ-ի գործակալություններին, զարգացման բազմակողմանի բանկերին, ՀԿ-ներին և այլն) ուղեցույց տրամադրվի այն քայլերի առնչությամբ, որոնք պետք է արվեն, երբ նրանց աշխատանքային ծրագրերը ենթարկվում են ականների և ՊՊՄ-ների առկայության ազդեցությանը;

է. ապահովելու, որ հակաականային գործողությունները կառավարող ազգային չափորոշիչները, կանոնակարգերը, ուղեցույցները կամ ընթացակարգերը շարադրված լինեն; այս բոլորը պետք է հիմնված լինեն ՀԱԳՄՉ-ների և համապատասխան ազգային օրենսդրության վրա;

ը. ազգային և միջազգային աղբյուրներից ռեսուրսների մոբիլիզացման համար:

11.2 Հակաականային գործողությունների կենտրոն (ՀԱԿ)

ՀԱԿ-ը, որպես ականազերծման գործողությունների գործառնական մակարդակում վերահսկող մարմին, պատասխանատվություն է կրում հետևյալ խնդիրների իրականացման համար՝

ա. կապ հաստատել կառավարության հաստատությունների (եթե կան այդպիսիք), մարդասիրական և զարգացման գործակալությունների միջև՝ պարզաբանելու, թե որոնք են ականազերծման գործողությունների անհետաձգելի և միջնաժամ-կետ գերակայությունները, և ծրագրեր նախագծելու՝ այդ գերակայություններն իրականացնելու համար;

բ. ազգային և/կամ տարածաշրջանային մակարդակներում ականազերծման գործողությունների կառավարման ստանձնում՝ ապահովելու, որ ականազերծման գործողությունների անհետաձգելի և միջնաժամկետ գերակայությունները բավարարված լինեն;

գ. կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում. սա կարող է Հակաականային գործունեության տեղեկատվության կառավարման համակարգը (IMSMA) լինել կամ որևէ այլ նմանատիպ ծրագիր;

դ. տեղեկությունների հավաքագրման և վերլուծության գործընթացի ստեղծում և իրականացում, որպեսզի ականների խնդրի և դրանց հետևանքների վերաբերյալ հնարավոր լինի բազմակողմանի գնահատում կատարել;

ե. ազգային, մարդասիրական և զարգացման նախագծերի ու ականազերծման գործողությունների ազգային ծրագրի միջև համաձայնեցվածության ապահովում;

զ. Հակաականային գործողությունների ազգային չափորոշիչների (ՀԱԳՄՉ) և ներքին համակարգերի ու ընթացակարգերի մշակում՝ ականազերծման գործողությունների արդյունավետ կառավարման համար;

է. ականազերծման գործողությունների ազգային ծրագրի իրականացում;

ը. ականազերծման գործողությունների օպերատորների հավաստագրում և հակաականային գործունեության գործողությունների մոնիթորինգ;

թ. գործել որպես ԱԳԱՄ-ի քարտուղարություն:

11.3 Միավորված ազգերի կազմակերպություն

Ականների վտանգին ամենաարդյունավետ և համապատասխան արձագանքն ապահովելու նպատակով Միավորված ազգերի կազմակերպության ակնազերծման գործողությունները խթանում են ազգային սեփականությունը, հաստատությունների ստեղծումն ու կարողությունների զարգացումը և կախված են ՀԱԳՄՉ առանցքային պահանջներին ստույգ հետևելուց:

ՄԱԿ-ի Ակնազերծման ծառայությունը (ՄԱԿԱԾ) Խաղաղապահ գործողությունների վարչության (ԽԳՎ) բաժինն է և ՄԱԿ-ի համակարգում հակաակնային գործունեության առանցքային ստորաբաժանումն է: Այն նպատակ ունի ապահովելու ՄԱԿ-ի արդյունավետ, գործունյա և համակարգված արձագանքը ակնների առկայությանը՝ ՄԱԿ-ի վարչությունների, գործակալությունների, հիմնադրամների և ծրագրերի հետ համագործակցության միջոցով:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (ՄԱԿԶԾ) բազմակողմանի աջակցություն է ապահովում ակնազերծման գործողությունների ազգային ծրագրերին՝ ակնազերծման գործողությունների լայնածավալ ասպարեզում և ակնապատված պետությունների խնդրանքով: Երկրներում գտնվող իր գրասենյակների և Հակաակնային գործողությունների թիմի միջոցով, որը տեղակայված է գլխամասային գրասենյակում՝ Ճգնաժամերի կանխարգելման և վերականգման բյուրոյում, ՄԱԿԶԾ-ն աջակցում է ակնապատված երկրներին հիմնել կամ հզորացնել ակնազերծման գործողությունների ազգային/տարածաշրջանային ծրագրերը՝ ստանձնելու ակնազերծման գործողությունների բոլոր բաղադրիչները:

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (UNICEF) իր մանդատի հիմքում ունի զինված հակամարտությամբ վտանգված երեխաների իրավունքների պաշտպանությունն ու զարգացումը: Իր գործընկերների (պետական, ՄԱԿ-ի այլ գործակալությունների և հիմնադրամների, միջազգային, հոգևոր և ոչ պետական կազմակերպությունների) հետ համագործակցության շնորհիվ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն առավելապես աջակցում է ԱՎԻ նախագծերի մշակմանն ու իրականացմանը և փոխկապակցված մարդասիրական գործողություններին:

ՄԱԿ-ի Ծրագրային ծառայությունների գրասենյակը (UNOPS), աշխատելով ՄԱԿԱԾ-ի, ՄԱԿԶԾ-ի և հակաակնային գործունեության այլ գործընկերների հետ, ծառայությունների գլխավոր տրամադրողն է հակաակնային գործունեության ոլորտում: UNOPS-ը կարողանում է ծառայություններ տրամադրել ակնազերծման գործողությունների ծրագրերին, որոնք կառավարվում կամ աջակցվում են ՄԱԿ-ի կողմից, ինչպես նաև կարողանում է իրականացման շարունակականությունն ապահովել անցումային ցանկացած փուլում, որ տեղի է ունենում ՄԱԿ-ի գործակալությունների միջև կամ ՄԱԿ-ի և ազգային իշխանությունների միջև:

Զինաթափման գործողությունների վարչությունը (DDA) ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին խորհրդատվություն է տրամադրում ու աջակցում իր պարտավորությունների իրականացմանը և իրագործում է այն մանդատները, որոնք հանձնվել են իրեն որպես Հակահետևակային ակնների արգելման կոնվենցիայի ու ՄՈԶ-ի և դրանց արձանագրությունների ավանդապահի:

Մարդասիրական գործողությունների համակարգման գրասենյակի (ՄԳՀԳ) առաքելությունն է մոբիլիզացնել և համակարգել արդյունավետ և սկզբունքներով հիմնված մարդասիրական գործունեությունը՝ համագործակցելով ազգային և միջազգային դերակատարների հետ: ՄԳՀԳ-ն ակտիվորեն ներգրավված և ներկայացված է համակարգման տարբեր մեխանիզմներում, որոնք ստեղծվել են ՄԱԿ-ի ակնազերծման գործողությունների թիմի,

մարմինների, դոնորների և այլ գործընկերների կողմից համաշխարհային, տարածաշրջանային և ազգային մակարդակներում:

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը (UNHCR) իր մանդատի հիմքում ունի փախստականների և Գերագույն հանձնակատարին մտահոգող այլ անձանց իրավունքների պաշտպանությունն ու խթանումը: Իր գործընկերների հետ համագործակցելիս՝ UNHCR-ը մի շարք երկրներում ճանաչում և աջակցում է ականագերժման գործողությունների ծրագրերին և ԱՎԻ նախագծերին ու դրանց առնչվող մարդասիրական գործողություններին, որոնք կապված են փախստականների վերադարձի և վերաինտեգրման հետ:

Համաշխարհային պարենային ծրագիրը (ՀՊԾ, WFP) օգտագործում է սնունդը՝ արտակարգ իրավիճակում կարիքները բավարարելու և նպաստելու տնտեսական և սոցիալական զարգացմանը: ՀՊԾ-ի ներգրավվածությունը հակաականային գործունեության մեջ առնչվում է նրա մանդատի հետ՝ ապահովել պարենային աջակցություն, և դրա ուշադրությունը կենտրոնացված է հակաականային գործունեության աջակցման վրա այն իրավիճակներում, որտեղ պարենային մարդասիրական արձագանքը սահմանափակված է ականներով կամ ՊՊՄ-ներով, և որտեղ պարենը չի կարող հասնել թիրախային նպաստառուներին, իսկ պարենն օգտագործվում է աջակցելու համայնքային ծրագրերին, որոնք ուղղակիորեն կապված են ականագերժման ծրագրերի հետ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) Առողջապահության նախարարության միջնորդությամբ պատասխանատու է համապատասխան չափորոշիչների և մեթոդաբանությունների մշակման համար, ինչպես նաև առողջապահական ծառայությունների կարողությունների զարգացման համար՝ տուժածներին կայուն աջակցության տրամադրելու նպատակով: Այն հանրային տեխնիկական առողջապահական աջակցություն է ապահովում ՄԱԿ-ի զանազան գործընկերներին, որոնք ներգրավված են ականագերժման գործողությունների ոլորտում, և սերտորեն համագործակցում է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ:

Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրատարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Մակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան:

- a) ՀԱԳՄՉ 03.10 Ականազերծման գործողությունների սարքավորումների գնման ուղեցույց
- b) ՀԱԳՄՉ 03.20 Գնումների գործընթաց;
- c) ՀԱԳՄՉ 03.30 Ականազերծման գործողությունների տեխնոլոգիաների հետազոտման ուղեցույց;
- d) ՀԱԳՄՉ 03.40 Ականազերծման գործողությունների սարքավորումների փորձարկում և գնահատում;
- e) ՀԱԳՄՉ 04.10 Ականազերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հապավումներ;
- f) ՀԱԳՄՉ 05.10 Տեղեկատվության կառավարում
- g) ՀԱԳՄՉ 06.10 Վերապատրաստման կառավարում
- h) ՀԱԳՄՉ 07.20 Ականազերծման գործողությունների պայմանագրերի մշակման և կառավարման ուղեցույց
- i) ՀԱԳՄՉ 08.20 Հակաականային գործունեության ընդհանուր գնահատում;
- j) ՀԱԳՄՉ 08.50 Տվյալների հավաքագրում և կարիքների գնահատում ԱՎԻ-ի համար:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները պահպանվում են ՄԱԺՄԿ-ում (Մարդասիրական ականազերծման Ժնկի միջազգային կենտրոն): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղղորդիչ սկզբունքների և փաստաթղթերի վերջին տարբերակների/թողարկումների գրանցամատյանը պահպանվում է ՄԱԺՄԿ կողմից և տեղակայված է ՀԱԳՄՉ կայքէջում (տես www.mineactionstandards.org): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմիններ ու կազմակերպություններ պետք է նախքան ականազերծման ծրագրեր սկսելը ձեռք բերեն դրանց պատճենները:

Լրացուցիչ օգտակար տեղեկություններ/հղումներ.

- k) Ականազերծման գործողությունների պլանավորման ՄԱԿ-ի ձեռնարկ;

- l) Ականազերծման գործողությունների և պատերազմի մնացորդային պայթուցիկների ուղեցույց, ՄԱԺՄԿ, ապրիլ 2007թ.;
- m) Հակաականային գործունեության օրենսդրության մշակման ուղեցույց, ՄԱԺՄԿ, մարտ 2006թ.;
- n) Հակաականային գործունեության միջազգային չափորոշիչների ուղեցույց, ՄԱԺՄԿ, ապրիլ 2006թ.;
- o) ՄԱԿ-ի միջգերատեսչական քաղաքականություն՝ հակաականային գործունեություն և արդյունավետ համակարգում, հունիս 2005թ.:

Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հասկացումներ

B.1.

հավատարմագրում

Ընթացակարգ, որով ակննազերծման կազմակերպությունը պաշտոնապես ճանաչվում է որպես կոմպետենտ և ունակ՝ պլանավորելու, կառավարելու և անվտանգ, արդյունավետ ու բարձր արտադրողականությամբ գործնականորեն իրականացնելու հակաակնաչափ գործողությունները:

Նշում՝ Հակաակնաչափ գործունեության ծրագրերի մեծամասնության համար ԱԳՄՍ-ը կլինի այն մարմինը, որ հավատարմագրում է տրամադրում: Միջազգային կազմակերպությունները, ինչպիսիք են ՄԱԿ-ը կամ տարածաշրջանային հաստատությունները, նույնպես կարող են հավատարմագրման մեխանիզմներ ներկայացնել:

Նշում՝ ISO 9000-ի կիրառումը կայանում է նրանում, որ “հավատարմագրման” մարմինը հավատարմագրում է “սերտիֆիկացման կամ գրանցման” մարմինները, որոնք ISO 9000 սերտիֆիկատներ են շնորհում կազմակերպություններին: Մինչդեռ ՀԱԳՄՉ-երի կիրառումը բացարձակապես տարբերվում է սրանից և հիմքում ունի վերը նշված հիմնական սահմանումը, որը քաջ հայտնի է հակաակնաչափ գործունեության հասարակությունում:

B.2.

Պայթուցիկ զինամթերք (ՊԶ)

Պայթուցիկ նյութեր, միջուկային բաժանիչներ, սինթետիկ նյութեր և կենսաբանական և քիմիական տարբեր պարունակող բոլոր զինամթերքները: Սրանք ներառում են ռումբերը և զինամասերը, ուղղորդվող և բալիստիկական հրթիռները, հրետանին, ակնանետները, հրթիռները և փոքր զինամթերքների փամփուշտները, բոլոր ականները, տորպեդները և խորքային ռումբերը, հրատեխնիկական, կուտակումները և բաշխիչները, փամփուշտների և պայթուցիկ նյութերի միջոցով գործարկվող սարքերը, էլեկտրոնային պայթուցիկ սարքերը, թաքնված և իմպրովիզացված պայթուցիկ նյութերը և գոյություն ունեցող բոլոր նման կամ հարակից իրերը կամ բաղադրիչները: [AAP-6]

B.3.

Ազատումը պայթուցիկ զինամթերքից (ԱՊԶ)

Պայթուցիկ զինամթերքի հայտնաբերումը, բնորոշումը, գնահատումը, անվտանգ դարձնելը, վերականգնումը և դրանից ազատվելը: ԱՊԶ կարելի է իրականացնել.

- որպես ակնազերծման գործողությունների սովորական մաս, ՊՊՄ հայտնաբերելու դեպքում
- Վտանգավոր տարածքներից դուրս գտնված ՊՊՄ-ից ազատվելու ժամանակ (սա կարող է լինել ընդամենը մեկ հատ ՊՊՄ, կամ ավելի մեծ քանակ որոշակի տարածքի ներսում) և
- Պայթուցիկ զինամթերքից ազատվելու համար, որը վտանգավոր է դարձել քայքայման, վնասման կամ ոչնչացման փորձ անելու ժամանակ:

B.4.

Հակաակնաչափ գործունեության ընդհանուր գնահատում (ՀԱԳԸԳ)

Շարունակական գործընթաց, որի միջոցով կարելի է ականների կամ ՊՊՄ-ների թունավորմամբ բոլոր գեկուցած և/կամ կասկածյալ տեղանքների, ինչպես նաև պայթուցիկ վտանգների քանակության և տեսակների, հողի տեղանքային առանձնահատկությունների, բուսականության և կլիմայի մասին տեղեկատվության համապարփակ գույքագրում իրականացնել; այդ թվում նաև ականների խնդրի ծավալի և անհատի, համայնքի ու երկրի վրա գործած հետևանքների գնահատման:

B.5.

ՄՏՀ

Աշխարհագրական և աշխարհատարածքային տեղեկատվական համակարգ

Համակարգչային տեխնիկայի, ծրագրերի, աշխարհագրական տվյալների և անձնակազմի համապարփակ հավաքածու, որի նպատակն է արդյունավետորեն պատկերահանել, պահպանել, թարմացնել, կիրառել, վերլուծել և ցուցադրել բոլոր տեսակի աշխարհագրական տեղեկությունները:

Նշում՝ ՄՏՀ թույլ է տալիս օգտագործողին գրաֆիկորեն դիտարկել բազմաշերտ տվյալներ, որոնք հիմնված են իրենց աշխարհագրական բաշխման և կապերի վրա: ՄՏՀ ներառում է տեղեկությունների տարբեր շերտերի միջև հարաբերությունները վերլուծելու հզոր միջոցներ:

B.6.

հետևանք

սոցիալական և տնտեսական զրկանքների մակարդակը, որին ենթարկվում է համայնքը՝ ականների և ՊՊՄ-ների վտանգի և վտանգավոր գոտիների կողմից առաջացրած վնասի կամ վնասի ռիսկի արդյունքում:

Նշում՝ հետևանքը հետևյալի արդյունքն է.

- ականների/ՊՊՄ-ների վտանգի առկայությունը համայնքում;
- ենթակառուցվածքների, օրինակ՝ ճանապարհների, շուկաների և այլն, օգտագործման հետ փոխկապակցված անհանդուրժելի ռիսկ;
- ապրուստի միջոցների, օրինակ՝ գյուղատնտեսական հողերի, ջրային աղբյուրների և այլն, օգտագործման հետ փոխկապակցված անհանդուրժելի ռիսկ;
- վերջին երկու տարիների ընթացքում ականների և ՊՊՄ-ների պատահարներից տուժածների քանակը:

B.7.

IMSMA

Հակաականային գործունեության տեղեկատվության կառավարման համակարգ (IMSMA)

Նշում՝ սա ՄԱԿ-ի նախընտրած տեղեկատվական համակարգն է՝ ՄԱԿ-ի աջակցությամբ դաշտային ծրագրերում վճռական տվյալների կառավարման համար: ՀԱՏԿ-ն օգտագործողներին օգնություն է ապահովում տվյալների հավաքագրման, տվյալների պահեստավորման, հաշվետվությունների, տեղեկատվության վերլուծության և նախագծերի կառավարման գործողություններում: Դրա առաջնահերթ օգտագործողներն են ՀԱԿ-երի անձնակազմը՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում, սակայն համակարգն օգտագործվում է նաև որպես աջակցություն բոլոր մակարդակներում հակաականային գործունեության նախագծերի իրականացնողներին և ականազերծման կազմակերպություններին:

B.8.

ստուգում

որևէ ապրանքի կամ ծառայության մեկ կամ մի քանի բաղադրիչների դիտարկում, չափահանում, գնում, փորձարկում, գնահատում կամ չափում և դրանց համեմատումը հասկոբոռշված պահանջների հետ՝ պարզելու համապատասխանությունը:

B.9.

հակաականային գործունեություն

գործողություններ, որոնք միտված են նվազեցնելու ականների և ՊՊՄ-ների սոցիալական, տնտեսական և բնապահպանական հետևանքները:

Նշում՝ հակաականային գործունեությունը չի վերաբերում միայն ականագերծմանը; այն վերաբերում է նաև մարդկանց և հասարակությանը, և ինչ ազդեցություն են կրում դրանք ականների տարածումից: Հակաականային գործունեության նպատակն է նվազեցնել վերգետնյա ականների ռիսկն այն մակարդակի, որպեսզի մարդիկ կարողանան անվտանգ ապրել; որպեսզի տնտեսական, սոցիալական և առողջապահության զարգացում կարողանա տեղի ունենալ՝ առանց ականների տարածման պատճառով սահմանափակումների; որպեսզի տուժածների կարիքները կարողանան բավարարվել: Հակաականային գործունեությունը բաղկացած է լրացուցիչ հինգ գործողություններից:

- a) ԱՎԻ;
- b) մարդասիրական ականագերծում, այսինքն՝ ականների և ՊՊՄ-ների հետազոտում, քարտեզագրում, տեղանշում և մաքրում;
- c) աջակցություն տուժածներին, այդ թվում նաև առողջության վերականգնում և վերաինտեգրում;
- d) պահուստային ռեզերվների ոչնչացում;
- e) հակահետևանքային ականների կիրառումը խարանելու քարոզչություն:

Նշում՝ մի շարք այլ ազդեցիկ գործողություններ են պահանջվում ի սատարում հակաականային գործունեության այս հինգ բաղադրիչներին, դրանք են՝ գնահատում և պլանավորում, ռեսուրսների մոբիլիզացիա և հերթականացում, տեղեկատվության կառավարում, մարդկային հմտությունների զարգացում և կառավարման դասընթաց, որակի կառավարում և արդյունավետ, համապատասխան և անվտանգ սարքավորումների կիրառում:

B.10.

Հակաականային գործունեության կենտրոն (ՀԱԿ)

Կազմակերպություն, որն ԱՎԻ վերապատրաստում է անցկացնում, ականապատված տարածքների հետախուզում և ականների մասին տվյալների հավաքագրում և կենտրոնացում է իրականացնում, (հակաականային գործունեության) տեղային ծրագրերը համաձայնեցնում է արտաքին գործակալությունների, (հակաականային գործունեության) ՀԿ-ների և տեղական ականագերծողների գործողությունների հետ: [ՄԱԿ-ի տերմինաբանության Bulletin No. 349] Հակաականային գործունեության ազգային ծրագրերի համար ՀԱԿ-ը սովորաբար գործում է որպես ԱԳԱՄ-ի գործառնական գրասենյակ:

B.11.

Ականագերծող կազմակերպություն

Վերաբերում է ցանկացած կազմակերպության (պետական, ՀԿ, զինվորական կամ կոմերցիոն հաստատություն), որը պատասխանատու է հակաականային գործունեության նախագծերի կամ խնդիրների իրականացման համար: Հակաականային գործունեության կազմակերպությունը կարող է լինել առաջնային կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ:

B.12.

Ականների վտանգի մասին իրազեկում (ԱՎԻ)

Գործողություններ, որոնք միտված են նվազեցնելու ականներից/ՊՊՄ-ներից ստացված վնասվածքների ռիսկը՝ բարձրացնելով իրազեկումը և խթանելով վարվելակերպի փոփոխություն, այդ թվում նաև հանրային տեղեկատվության տարածում, ուսուցում և վերապատրաստում, ինչպես նաև հակաականային գործունեության համայնքային համայնքային հետադարձ կապ:

B.13.

մոնիտորինգ

հակաականային գործունեության համատեքստում այս տերմինը վերաբերում է թույլատրված դիտարկում, ստուգում կամ գնահատում աշխատակետերի, հարմարությունների, սարքավորումների, գործողությունների, գործընթացների, ընթացակարգերի և թղթաբանության ոլորտներում որակավորում ունեցող անձնակազմի կողմից՝ առանց պատասխանատվություն կրելու, թե ինչն է մոնիտորինգի ենթարկվում: Մոնիտորինգը սովորաբար իրականացվում է՝ ստուգելու համաձայնեցումը պարտավորությունների, ընթացակարգերի կամ չափորոշիչ փորձի հետ և հաճախ ներառում է արձանագրման և զեկուցման բաղադրիչները:

ԱՎԻ-ի համատեքստում այս տերմինը վերաբերում է տեղի ունեցող երևույթների չափման կամ դիտարկման գործընթացին: Այն իր մեջ ներառում է.

ա. Չափման առաջընթացը ներգործության իրականացման ծրագրի կապակցությամբ՝ ծրագրեր/նախագծեր/գործողություններ, ռազմավարություն, քաղաքականություն և առանձնահատուկ նպատակներ:

բ. Փոփոխության չափում որևէ պայմանի կամ պայմանների խմբի դեպքում կամ դրանց բացակայության դեպքում (օրինակ՝ երեխաների կամ կանանց իրավիճակի փոփոխություն կամ էլ փոփոխություն երկրի ավելի լայն մասշտաբի համատեքստում):

գ. Սահմանումը սկիզբ է առնում UNICEF-ի “Կանոնակարգի և ծրագրավորման ձեռնարկից”:

B.14.

քաղաքականություն

սահմանում է կազմակերպության նպատակներն ու խնդիրները և պարզորոշում է գործունեության կանոնները, չափորոշիչներն ու սկզբունքները, որոնք թելադրում են այն ուղին, որով կազմակերպությունը նպատակադրվում է հասնել այդ նպատակներին:

Նշում՝ քաղաքականությունը զարգանում է ի պատասխան ռազմավարական ուղղության և դաշտային փորձի: Իր հերթին այն ազդեցություն է գործում ծրագրերի զարգացման ուղու/ձևի վրա, և ինչպես են մոբիլիզացվում և կիրառվում ռեսուրսները: Քաղաքականությունը կարգադրող բնույթ ունի և ենթադրում է ենթարկում կամ առնվազն հորդորվում է:

B.15.

նախագիծ

մի նախաձեռնում/ջանք է, որում մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները կազմակերպված են՝ նախաձեռնելու աշխատանքի մի ուրույն ծավալ, տվյալ առանձնահատկությամբ, ծախսերի և ժամանակի սահամանափակումներով՝ հանգելու բարենպաստ փոփոխությունների, որոնք սահմանվել են քանակական և որակական նպատակներով:

B.16.

Որակի ապահովում (ՈԱ)

ՈԿ մաս, որը վերաբերում է որակի պահանջների պահպանման վերաբերյալ վստահության ապահովմանը [ISO 9000:2000]

Նշում՝ **մարդասիրական ակնազերծման** մեջ QA-ի նպատակն է հաստատել, որ ակնազերծման կառավարման փորձը և գործառնական ընթացակարգերը պատշաճ են, կիրառվում են և նշված պահանջին կհասնեն անվտանգ, արդյունավետ և բարձր արտադրողական ձևով: Ներքին QA-ը կիրականացվի հենց ակնազերծման կազմակերպությունների կողմից, սակայն արտաքին ստուգումները նույնպես պետք է իրականացվեն մոնիտորինգի արտաքին մարմնի կողմից:

B.17.

Որակի հսկում (ՈՀ)

Որակի կառավարման (ՈԿ, QM) մի մաս է, որը կենտրոնացած է որակի պահանջները բավարարելու վրա: [ISO 9000:2000]

Նշում՝ ՈՀ-ն վերաբերում է ավարտված ապրանքի *ստուգմանը*: Մարդասիրական ակնազերծման դեպքում “ապրանքն” է մաքրված հողը:

B.18.

Որակի կառավարում (ՈԿ)

Համակարգված գործողություններ որևէ կազմակերպությանը որակի առումով ուղղորդելու և վերահսկելու: [ISO 9000:2000]

B.19.

Չպայթած զինամթերք (ՉՉ)

Պայթուցիկ զինամթերք, որը լիցքավորվել է, ձուլվել/հագեցվել է պայթուցիչով, զինվել կամ որևէ այլ կերպ նախապատրաստվել է օգտագործման համար կամ օգտագործվել է: Այն կարող է լինել հրանետված, ցած գցված, տեղադրված կամ նախատեսված, սակայն դեռևս չպայթեցված՝ ձախողման պատճառով, շահագործման կառուցվածքից էլնելով կամ էլ որևէ այլ պատճառով:

B.20.


ՄԱԿ-ի Ակնազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)

ՄԱԿ-ի համակարգում հակաականային գործունեությանն առնչվող բոլոր գործողությունների կարևոր կետն է:

Նշում՝ ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ի քարտուղարության այն գրասենյակն է, որը միջազգային հանրության առջև պատասխանատու է ՀԱԳՄՉ-երի մշակման և պահպանման համար:

Նշում՝ UNICEF-ը կարևոր գրասենյակն է ԱՎԻ-ի գծով՝ ՄԱԿԱԾ-ի ընդհանուր համակարգման ուղեցույցի շրջանակում:

Հավելված Գ
(Տեղեկատվական)
Սովորական ՀԱԿ-ի ընդհանուր կազմակերպում



Հապավումներ՝
 ՈԱ – Որակի ապահովում
 ՈՀ – Որակի հսկում
 ՍՏ – Աջակցություն տուժածներին
 ՀԿ – Համայնքային կապ
 ԱՎԻ – Ականների վտանգի իրազեկում
 Ծրագրեր - Պլանավորում
 ԱՏՇ – Ականներ հայտնաբերող շուն
 Մեխ – Մեխանիկական
 ՊՌՈ – Պահուստային ռեզերվների ոչնչացում
 Թիկ – Թիկունք/պահեստ
 Անձն/Վարչ - Անձնակազմ/Վարչ-յուն

Նշում՝
 ՀԱԿ-ը կարող է նաև հաղորդակցման կենտրոն ներառել, որը ականագերծման գործողությունների ազգային ցանցային հաղորդակցման ցանցի հսկման կայանը պետք է լինի: Սա կլինի սույն կազմակերպության կառուցվածքի «Գործողություններ» բաժնի հսկողության ներքո:

Հավելված Դ
(Տեղեկատվական)
ՀԱԿ-ի հիմնադրման համար անձնակազմի հատկանշական
պահանջներ

Նշանակում *1	Բաժին	Նշումներ
ՀԱԿ-ի տնօրեն	Կառավարում	Տնօրենը կատարված առաջին նշանակումներից մեկը պետք է լինի և ՀԱԿ-ի սկզբնական հիմնադրման ժամանակ նպաստի անձնակազմի մնացած մասի ընտրությանը:
Ռազմավարական կառավարման ղեկավար	Ռազմավարական կառավարում	Ռազմավարական կառավարման ղեկավարը պատասխանատու է կարիքների գնահատման համար (օրինակ՝ Ականների ազդեցության հետազոտման միջոցով և կառավարության ու զարգացման գործակալությունների հետ խորհրդատվությունների միջոցով); ռազմավարության ձևավորման և ռազմավարության իրականացման ծրագրերի համար; ինչպես նաև արդյունքների գնահատման համար, որոնք, օրինակ, ձեռք են բերվել հետմաքրման հետազոտությունների միջոցով: Ռազմավարական կառավարման ղեկավարն աջակցում է ՀԱԿ-ի տնօրենին ռեսուրսների մոբիլիզացման ուղղությամբ և սերտորեն աշխատում է Գործողությունների ղեկավարի հետ՝ պլանավորման ուղղությամբ, և կառավարության վարչությունների, դոնոր կազմակերպությունների և այլնի հետ՝ որոշելու նրանց կարիքները հակաականային գործունեության աջակցության ոլորտում:
Գործառնությունների ղեկավար	Գործառնություններ	Գործառնությունների ղեկավարը համակարգում և վերահսկում է գործողությունների ենթաբաժինների աշխատանքը տեղեկատվության շտեմարանի ստեղծման, ցանկացած ընդհանրական հետազոտությունների պլանավորման և իրականացման, հակաականային գործողությունների կառավարման ու չափորոշիչների և ընթացակարգերի ձևավորման ուղղությամբ: Գործառնությունների ղեկավարն աջակցում է ՀԱԿ-ի տնօրենին ծրագրի ձևավորման աշխատանքներում և մասնագիտացած անձնակազմի քաղաքականության ղեկավարում ցանկացած մասնագիտական ներդրում է կատարում ՀԱԿ-ի գործառնություններում:
ՈԱ պատասխանատու	Գործառնություններ	ՈԱ պատասխանատուն նախնական շրջանում ներգրավված է լինում ՈԱ ընթացակարգերի մշակման աշխատանքներում՝ ականազերծման գործողություններով զբաղվող կազմակերպություններին հավատարմագրելու նպատակով, ականազերծման խնդիրների մոնիտորինգի և ստուգման ու անհրաժեշտության դեպքում վավերացնելու պահուստային ռեզերվների ոչնչացման առաջադրանքները: ՈԱ պատասխանատուն ներգրավված կլինի նաև չափորոշիչների և ընթացակարգերի մշակման աշխատանքներում և նրանից կպահանջվի ՈԱ իրականացնել ականազերծման ընթացիկ խնդիրների վերաբերյալ:
ՈԱ դիտորդ	Գործառնություններ	ՈԱ դիտորդն աջակցում է ՈԱ պատասխանատու անձին ՈԱ ընթացակարգերի մշակման աշխատանքներում և ՈԱ առաջադրանքներ է իրականացնում: ՀԱԿ-ի առաջընթաց

		գարգացմանը զուգահեռ կարող են լրացուցիչ ՈԱ դիտորդներ պահանջվել:
Գործառնությունների պատասխանատու	Գործառնություններ	Գործառնությունների պատասխանատուն իրականացնում է պլանավորման և ընթացիկ գործառնությունների պարտականությունները (այդ թվում նաև ընդհանրական հետազոտությունը), աջակցում է չափորոշիչների և ընթացակարգերի մշակման աշխատանքներին և աջակցում է Գործառնությունների ղեկավարին և ՀԱԿ-ի տնօրենին՝ ծրագրի իրականացման աշխատանքներում: ՀԱԿ-ի առաջընթաց գարգացմանը զուգահեռ պլանավորման և ընթացիկ գործողությունների պարտականությունները կարող են ստանձնացվել Պլանավորման և Ընթացիկ գործառնությունների պատասխանատուների կողմից, երբ Գործառնությունների պատասխանատուի պաշտոնը զբաղեցնող անձն իրականացնում է այս երկու նշանակումներից որևէ մեկը:
Գործառնությունների օգնական	Գործառնություններ	Գործառնությունների օգնականն աջակցում է Գործառնությունների ղեկավարի և Գործառնությունների պատասխանատու անձանց պարտականությունների կատարմանը: ՀԱԿ-ի առաջընթաց գարգացմանը զուգահեռ կարող են Գործառնությունների լրացուցիչ օգնականներ պահանջվել:
Համայնքային կապի/ԱՎԻ գծով պատասխանատու	Գործառնություններ	Համայնքային կապի և ԱՎԻ գծով համատեղ պատասխանատու անձը պատասխանատու է հակաականային գործողություններում Համայնքային կապի գործառնության համակարգման համար՝ հակաականային գործունեության ծրագրի վաղ շրջանում տուժած համայնքների կարիքների նկատառումն ապահովելու նպատակով: Համայնքային կապի/ԱՎԻ գծով պատասխանատու անձից կպահանջվի նաև ԱՎԻ ներդրում կատարել ընդհանրական հետազոտության պլանավորման և իրականացման ժամանակ՝ ԱՎԻ կարիքների գնահատման տվյալների հավաքագրումն ապահովելու նպատակով: Համայնքային կապի և ԱՎԻ գծով գործառնություններ իրականացնող կազմակերպությունների հետ փոխգործակցությունը նույնպես կպահանջվի՝ գործողությունների մոնիտորինգի և անհրաժեշտ համակարգում ապահովելու նպատակով: Ծրագրի գարգացմանը զուգահեռ Համայնքային կապի և ԱՎԻ գծով գործառնությունները կարող են առանձնացվել:
Տեղեկությունների կառավարման պատասխանատու	Գործառնություններ	Տեղեկությունների կառավարման պատասխանատուն պատասխանատու է տվյալների շտեմարանի ստեղծման, արտաքին կազմակերպությունների հետ փոխգործակցության համար՝ տեղեկությունների ձեռք բերման կամ փոխանակման համար՝ հակաականային գործողությունների առաջնահերթությանն օժանդակելու, ծրագրում կիրառման ենթակա զեկույցների մշակման կամ որդեգրման համար (Գործողությունների ղեկավարի հսկողության ներքո), շտեմարանում տվյալների մուտքագրման և տեղեկությունների կառավարման մշակման համակարգերի և ընթացակարգերի համար: Տեղեկությունների կառավարման պատասխանատուն սերտորեն կաշխատի նաև Գործառնությունների ղեկավարի և Գործառնությունների պատասխանատուի հետ՝ հակաականային գործունեության աշխատանքային ծրագրերի մշակման և հակաականային գործունեության

		առաջադրանքների պլանավորման ոլորտներում:
Տվյալների մուտքագրման գործավար	Գործառնություններ	Տվյալների մուտքագրման գործավարները պատասխանատու են աջակցելու տվյալների ստուգմանը և հավաստիության ստուգմանը, տվյալների մուտքագրման շտեմարանում և ծրագրին օժանդակելու նպատակով զեկույցների ու քարտեզների մշակման համար: Կախված տեղեկատվության ծավալից կարող է պահանջվել Տվյալների մուտքագրման մեկից ավելի գործավար:
Օժանդակ ծառայությունների պատասխանատու	Օժանդակ ծառայություններ	Օժանդակ ծառայությունների պատասխանատուն պատասխանատու է աջակցման ծառայության գործառնությունների համար (թիկունքի, անձնակազմի և վարչարարության)՝ ի օժանդակում ՀԱԿ-ի: Նա վերահսկում է նաև ֆինանսական ենթաբաժնի աշխատանքը, սակայն, ֆինանսների ընդհանուր կառավարումը ՀԱԿ-ի տնօրենի պարտականությունն է: Ծրագրի զարգացմանը զուգահեռ ֆինանսական ենթաբաժինը կարող է առանձնապես օժանդակ ծառայությունների բաժնից և դառնալ մեկ այլ առանձին բաժին՝ Ֆինանսական պատասխանատուի վերահսկողության ներքո:
Օժանդակ ծառայությունների օգնական	Օժանդակ ծառայություններ	Օժանդակ ծառայությունների օգնականն առաջին հերթին օժանդակում է Օժանդակ ծառայությունների պատասխանատուի պարտականությունների կատարմանը: ՀԱԿ-ի առաջատար զարգացմանը զուգահեռ Օժանդակ ծառայությունների լրացուցիչ օգնականներ կարող են պահանջվել, իսկ թիկունքի և անձնակազմի/վարչարարության գործառնությունները կարող են հստակորեն վերափոխվել առանձին ենթաբաժինների:
Ֆինանսական օգնական	Օժանդակ ծառայություններ	Ֆինանսական օգնականը պատասխանատու է ծրագրի հատկացված ֆինանսների առօրյա կառավարման համար, սակայն ֆինանսների ընդհանուր կառավարման պատասխանատվությունը կրում է ՀԱԿ-ի տնօրենը: Ծրագրի զարգացմանը զուգահեռ կամ երբ ֆինանսական կառավարումը գնալով բարդանում է, սույն պաշտոնը կարող է վերափոխվել Ֆինանսական պատասխանատուի՝ Ֆինանսական լրացուցիչ օգնականների անհրաժեշտությամբ: Սակայն ֆինանսների ընդհանուր կառավարումն այնուամենայնիվ կլինի ՀԱԿ-ի տնօրենի հսկողության ներքո:

Նշում. նշանակումների/պաշտոնների անվանումները կարող են տարբերվել ծրագրից ծրագիր:

Հավելված Ե **(Տեղեկատվական)** **ՀԱԿ-ի գործառնական բաղադրիչները**

E.1. ՀԱԿ-ի տնօրեն

ՀԱԿ-ի տնօրենը պատասխանատու է ՀԱԿ-ի և հակաականային գործունեության ծրագրի ղեկավարման համար, սակայն նրա պարտականությունները տարբեր կարող են լինել՝ կախված ՀԱԿ-ի հիմնադրման փուլից կամ այն փաստից, արդյոք գոյություն ունի գործող ԱԳԱՄ:

E.1.1. ՀԱԿ-ի սկզբնական ստեղծում

ՀԱԿ-ի սկզբնական ստեղծման ժամանակ և այն դեպքում, երբ անհավանական է գործող ԱԳԱՄ-ի առկայությունը, ՀԱԿ-ի տնօրենն առաջին հերթին պատասխանատու է ապահովելու, որ ականագերծման գործողությունների գերակայությունները հիմնվեն, ապահովվեն ռեսուրսներով և բավարարվեն: Մա նաև պետք է ներառի ականներով պատված կասկածյալ բոլոր գոտիների ընդարձակ հետազոտության ապահովումը (ընդհանրական հետազոտություն; Ականների ազդեցության հետազոտություն և այլն), եթե այս ամենն արդեն չի իրականացվել՝ աջակցելու պարզաբանել ականագերծման գործողությունների անմիջական/ներկայիս և հետագա կարիքները:

ՀԱԿ-ի տնօրենի պարտականությունները պետք է ներառեն փոխգործակցություն գործող կառավարության, մարդասիրական և զարգացման գործակալությունների հետ՝ սահմանելու ականագերծման գործողությունների ներկայիս/անմիջական և միջնաժամկետ գերակայությունները; Ծրագրի շրջակում իրականացվող ականագերծման ցանկացած գործողությունների կառավարման վերահսկում՝ ապահովելու, որ դրանք համապատասխանեն գերակայություններին ու ընդունված չափորոշիչներին; ականագերծման գործողությունների կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծման ապահովում; գնահատման կամ հետազոտության ցանկացած գործողության իրականացման վերահսկողություն; զարգացման գերակայությունների սահմանում և ականագերծման գործողությունների ազգային ծրագրի նախագծի մշակում և, վերջապես, ազգային ՀԱՉ-երի և ականագերծման գործողությունների կառավարման ներքին համակարգերի և ընթացակարգերի մշակման վերահսկողություն:

Բացի դրանցից, ՀԱԿ-ի տնօրենը պատասխանատու կլինի ՀԱԿ-ի բյուջեի կառավարման համար և զգալի դեր կունենա անձնակազմի ընտրության, սարքավորումների գնման և ՀԱԿ-ի համար շենքային հարմարությունների ընտրության հարցերում:

Ռազմավարական մակարդակում ՀԱԿ-ի տնօրենը պատասխանատու կլինի ազգային կառավարության հետ փոխգործակցության համար, ինչպես նաև ՄԱԿ-ի, դոնորների և այլ շահառուների հետ փոխգործակցության և հաշվետվության համար:

E1.2. Հիմնադրված ՀԱԿ

Այն պահից, երբ ՀԱԿ-ը հիմնադրված է և գործում է, ՀԱԿ-ի տնօրենը սկսում է ավելի մտահոգվել ականագերծման գործողությունների ծրագրի արդյունավետությամբ և դրա ազդեցությամբ՝ անվտանգության բարելավման ու զարգացման հնարավորությունների առումով:

ՀԱԿ-ի տնօրենի պարտականությունները ներառում են.

ա. Ռեսուրսների մոբիլիզացիա, այդ թվում նաև հակաականային գործունեության ռեսուրսներ և բյուջեի կառավարում;

բ. Փոխգործակցություն հակաականային գործունեության աջակցություն պահանջող կազմակերպությունների հետ;

գ. Հակաականային գործունեության ազգային ծրագրի իրականացման ղեկավարում (սա կարող է ներառել ծրագրի վերանայում՝ ըստ իրավիճակի կամ գերակայությունների փոփոխության և ըստ լրացուցիչ տեղեկատվության առկայության);

դ. Հակաականային գործունեության աշխատանքային ծրագրերի մշակման, իրականացման և ղեկավարման վերահսկում;

ե. Հակաականային գործունեության գործողությունների տեխնիկական, որակական և անվտանգության չափորոշիչների ապահովում, այդ թվում նաև Անվտանգություն և աշխատանքի հիզդենա (ԱԱՀ);

զ. Ապահովել, որ ՀԱԿ-ը և ականագերծման գործողությունների ծրագիրը մշտապես համահունչ լինեն ականագերծման գործողությունների տեխնոլոգիաների միջազգային չափորոշիչներին և առաջխաղացումներին, և որ ՀԱԿ-ը և ականագերծման գործողությունների ծրագիրն իրենց աշխատանքի որակի և արդյունավետության բարելավման ուղիներ փնտրեն ակտիվորեն (բյուջեի սահմաններում);

է. Ապահովել, որ ականագերծման գործողությունների ծրագրի կամ դրա բաղադրիչների գնահատումներն իրականացվեն կառավարման կարիքներին և դոնորների ու այլ կարևոր շահառուների պահանջներին համապատասխան;

ը. Ղեկավարել վերապատրաստման գործողությունները՝ բարելավելու ականագերծման գործողությունների անձնակազմի ունակությունները: ՀԱԿ-ի տնօրենը նույնպես պատասխանատու կլինի ՀԱԿ-ի անձնակազմի և սարքավորումների կառավարման վերահսկման համար:

Ռազմավարական մակարդակում ՀԱԿ-ի տնօրենը պետք է շարունակի պատասխանատու լինել ազգային կառավարության իշխանությունների հետ փոխգործակցության համար, ինչպես նաև ՄԱԿ-ի, դոնորների և այլ շահառուների հետ փոխգործակցության և հաշվետվության համար: ՀԱԿ-ի տնօրենը կարող է նաև ուղղակիորեն ներգրավված լինել ԱԳԱՄ-ի կարողությունների զարգացման մեջ, եթե այդպիսին հիմնադրվի:

E.1.3. Հիմնադրված ԱԳԱՄ-ի առկայությունը

Եթե առկա է հիմնված և գործող ԱԳԱՄ-ը, ապա ՀԱԿ-ի տնօրենի պարտականությունների որոշ մասը կփոփոխվի, քանզի ԱԳԱՄ-ը կստանձնի ազգային մակարդակի պարտականությունները: Օրինակ՝

ա. Հակաականային գործունեության ազգային ծրագրի վերանայման վերաբերյալ որոշումները կկայացվեն ԱԳԱՄ-ի կողմից: Այնուամենայնիվ, ՀԱԿ-ի տնօրենից դեռ կպահանջվի տեխնիկական խորհրդատվություն տրամադրել ԱԳԱՄ-ին՝ քաղաքականության և ռազմավարության ձևավորման վերաբերյալ, և պատասխանատու լինել ցանկացած փոփոխությունների իրականացման համար:

բ. ԱԳԱՄ-ը կարող է պատասխանատվություն ստանձնել ծրագրային բյուջեի ձևավորման և բյուջեի մոնիտորինգի համար՝ չնայած առանձնահատուկ ձևակերպումները կսահմանեն այս դրույթները:

զ. ԱԳԱՄ-ը պատասխանատվություն կստանձնի ծրագրի շրջանակներում աշխատելու հակաականային գործունեության կազմակերպությունների հավատարմագրումը: ՀԱԿ-ի տնօրենից դեռ կպահանջվի խորհրդատվություն տրամադրել դրա վերաբերյալ:

ՀԱԿ-ի տնօրենի կողմից ստանձնվող լրացուցիչ պարտականությունները կներառեն.

ա. ԱԳԱՄ-ին տեղեկացնել ծրագրի շրջանակներում գործողությունների մասին;

բ. Ըստ անհրաժեշտության ԱԳԱՄ-ի հանդիպումների համակարգում: ՀԱԿ-ի տնօրենը նույնպես պետք է մասնակցի ԱԳԱՄ-ի կանոնավոր հանդիպումներին:

գ. ԱԳԱՄ-ի անունից դռնորներին, ՄԱԿ-ին և այլ շահառուներին ներկայացվող արտաքին զեկույցների պատրաստում:

ՀԱԿ-ի տնօրենի պարտականությունների մնացած մասը, ինչպես դա վերը նկարագրվել է E.1.2 կետում, նույնպես կիրառելի կլինի:

E.2. Ռազմավարական կառավարման բաժին

Կախված ականների տարածման ծավալից՝ ՀԱԿ-ը կարող է առանձին բաժին ունենալ՝ ՀԱԿ-ի տնօրենին աջակցելու հետևյալում՝

ա. Ականազերծման գործողությունների ծառայությունների ներկայիս, նշմարվող և ապագա կարիքների պարզաբանում և ամբողջական ու ճշգրիտ գնահատման ապահովում՝ հիմնվելով, օրինակ՝ ծավալուն հետազոտությունների (ընդհանրական կամ Ականների ազդեցության հետազոտում), տուժածներին հետևելու համակարգերի և կառավարության ու միջազգային գործակալությունների հետ պարբերական խորհրդատվությունների վրա՝ կապված դրանց աշխատանքային ծրագրերի և հակաականային գործունեության աջակցման պահանջների հետ:

բ. Ականազերծման գործողությունների ազգային ռազմավարության և բազմամյա ծրագրի ձևավորում, որը ներառում է ականազերծման գործողությունների բուն ծրագրի աշխատանքները, ինչպես նաև այն, թե ինչպես է հակաականային գործունեությունը համաձայնեցվում լայնածավալ զարգացման գերակայությունների հետ՝ աջակցելով հանրային այլ ծառայությունների տրամադրմանը և զարգացման ներդրումային նախագծերի իրականացմանը (ճանապարհներ, էլեկտրաէներգիա, գյուղական զարգացում և այլն):

գ. Ականազերծման գործողությունների ծրագրի կատարած արդյունքների գնահատում, այդ թվում նաև սոցիալական և տնտեսական օգուտը՝ հիմնվելով, օրինակ՝ ականազերծումից հետո հողօգտագործման հետազոտությունների, ծախսերի և օգուտների վերլուծության, կառավարության և միջազգային գործակալությունների հետ պարբերաբար խորհրդատվությունների վրա, որոնց աշխատանքային ծրագրերին աջակցում է հակաականային գործունեությունը:

E.3. Իրավաբանական բաժին

Կախված ականազերծման գործողությունների ծրագրի պահանջներից՝ ՀԱԿ-ը կարող է իրավաբանական բաժին ունենալ կամ իրավաբանական ծառայությունները կարող են տրամադրվել դրսից:

Եթե իրավաբանական բաժինը ստեղծվում է, ապա այն պատասխանատու կլինի հետևյալի համար՝

ա. Ականազերծման գործողությունների մրցույթի կազմակերպում և պայմանագրերի կնքում;

բ. Միջազգային և ազգային կանոնակարգերի և չափորոշիչների մեկնաբանում;

գ. Ապահովել, որ ՀԱԿ-ի կողմից մշակվող փաստաթղթերը, օրինակ՝ ազգային ՀԱԶ-երը, պատշաճորեն ձևակերպված լինեն՝ ապահովելու օրինապահության պահանջվող մակարդակը:

Իրավաբանական բաժնից կարող է նաև պահանջվել խորհրդատվություն տրամադրել ՀԱԿ-ին այն իրավիճակներում, երբ ականազերծման գործողությունների արդյունքում արտաքին գործակալությունները դժգոհություն են հայտնում ՀԱԿ-ից: Սա կարող է այնպիսի իրավիճակներ ներառել, երբ տուժում է անձնակազմը, կամ սեփականությունն ու ենթակառուցվածքներն են վնաս կրում՝ հակաականային գործունեության կազմակերպությունների կամ ՀԱԿ-ի ենթադրյալ գործողությունների, վրիպումների կամ անփութության արդյունքում:

E.4. Գործողությունների բաժին

Գործողությունների բաժինը պատասխանատու է ականազերծման բոլոր գործողությունների կառավարման համար, որոնք իրականացվում են ականազերծման գործողությունների ծրագրի շրջանակներում: Գործողությունների բաժնի պարտականությունները կարող են ներառել հետևյալը՝

ա. Գործողությունների մակարդակում փոխգործակցություն այն կազմակերպությունների հետ, որոնք հակաականային գործունեության աջակցություն են պահանջում, մասնավորապես մարդասիրական և զարգացման կազմակերպություններ:

բ. Տեխնիկական խորհրդատվության տրամադրում ՀԱԿ-ի տնօրենին և տեղեկությունների տրամադրում նրան գործողությունների վերաբերյալ:

գ. Աջակցություն հակաականային գործողությունների ազգային ծրագրի մշակմանն ու կառավարմանը:

դ. Աջակցություն հակաականային գործունեության կազմակերպությունների ընտրությանը, որոնք աշխատելու են ծրագրի շրջանակներում:

ե. Ականազերծման գործողությունների կազմակերպությունների հավատարմագրման վերահսկում:

զ. ՀԱԿ-ի տեղեկատվության կառավարման և ԱՏՀ գործառույթների վերահսկում:

է. Ազգային ՀԱԶ-երի, հակաականային գործունեության գործողությունների կառավարման ներքին համակարգերի և ընթացակարգերի և ազգային տեխնիկական այլ հրատարակությունների մշակում և կառավարում:

ը. Ականազերծման գործողությունների պլանավորում և կառավարում: Մա ներառում է Ականազերծման գործողությունների աշխատանքային ծրագրերի մշակում, առանձնահատուկ առաջադրանքների պլանավորում, առաջադրանքների բաշխում, մոնիտորինգի առաջընթացն ըստ աշխատանքային ծրագրի և անհատական առաջադրանքների, հակաականային գործունեության կազմակերպությունների միջև հանձնման-ընդունման կազմակերպում, մասնագիտական աջակցության համակարգում, փոփոխությունների կառավարում, առաջադրանքների ընդունում-հանձնում (տարածքների մաքրման առաջադրանքներ), ականազերծման գործողությունների միջադեպերին արագ արձագանքման կազմակերպում և առօրյա հաշվետվությունների կազմակերպում:

թ. Ականազերծման գործողությունների մոնիտորինգի և ստուգման վերահսկում՝ ապահովելու պահանջվող տեխնիկական, որակական և Անվտանդության ու աշխատանքի հիգիենայի (ԱԱՀ) չափորոշիչների կիրառումը:

ժ. Գործողությունների ենթաբաժինների աշխատանքի համակարգում ըստ անհրաժեշտության:

ժա. Նոր սարքավորումների կամ ընթացակարգերի փորձարկման և գնահատման (ՓԳ) համակարգում կամ կառավարում: Փորձարկումն ու գնահատումը կարող են իրականացվել ականազերծման գործողություններով զբաղվող կազմակերպությունների կամ հենց ՀԱԿ-ի կողմից:

ժբ. Վերապատրաստման համակարգում ըստ անհրաժեշտության՝ բարելավելու ականազերծման գործողությունների անձնակազմի ունակությունները: Մա կարող է ներառել նոր ընդունված անձնակազմի ճանաչողական վերապատրաստում, առօրյա/կանոնավոր վերապատրաստում թարմացման նպատակով կամ ներածական վերապատրաստում, երբ ծրագիր են ներմուծվում նոր ընթացակարգեր կամ սարքավորումներ:

ժգ. Տեղեկությունների հավաքագրման վերահսկում և կանոնավոր զեկուցագրերի պատրաստում:

ժե. Կանոնավոր հանդիպումների համակարգում և վարում/օժանդակում թե ՀԱԿ-ի ներքին կառույցում և թե ականազերծման գործողություններով զբաղվող կազմակերպությունների հետ:

ժզ. Կանոնավոր ճեպագրույցների կազմակերպում լրատվամիջոցների, այցելուների և այլ շահառուների համար:

ժէ. Պատահարների հետաքննության իրականացում՝ ապահովելով նաև ուղղիչ կամ խրատական ցանկացած գործողության իրականացում, որը պահանջվում է որպես պատահարի հետաքննության արդյունք:

ժը. ՀԱԿ-ի հաղորդակցման կենտրոնի կառավարում, որը պետք է լինի հակաականային գործունեության հաղորդակցման ազգային ցանցի վերահսկման ցանցային կայանը:

Գործողությունների բաժինը ներառում է ենթաբաժինների մի շարք, որոնցից յուրաքանչյուրը հիմնվել է՝ ականազերծման որոշակի գործողություններ կառավարելու համար կամ փոխգործակցություն, որակի կառավարում (ՈԿ) կամ տեղեկատվության կառավարման գործառնություններ իրականացնելու համար: Այս ենթաբաժիններից մի քանիսի հիմնումը (աջակցություն տուժածներին, ականներ հայտնաբերող շներ (ԱՀՇ), մեխանիկական և պահուստային ռեզերվների ոչնչացում) կախված կլինի այն հանգամանքից, արդյոք Ականազերծման գործողությունների ծրագիրն իրականացնում է սովյալ գործողությունները:

Այն դեպքերում, երբ մասնագիտացված ենթաբաժիններ են ստեղծվում ՀԱԿ-ի կազմում, օրինակ՝ աջակցություն տուժածներին, ԱՎԻ, ականներ հայտնաբերող շներ, մեխանիկական և պահուստային ռեզերվների ոչնչացում, այս ենթաբաժինները որոշակի պարտականություններ կունենան՝ իրենց մասնագիտությունների առնչությամբ: Դրանք են՝

ա. ՀԱԿ-ի պարտականությունների կատարում, որոնք համապատասխանում են իրենց մասնագիտություններին և ներառված են ազգային ՀԱԶ-երում:

բ. Ներդրում վերապատրաստմանը կամ մասնակցություն; սարքավորումների փորձարկում և գնահատում (ՓԳ), հավատարմագրում; առաջադրանքների բաշխում; մոնիտորինգ; ստուգում, գնահատում կամ հաստատում; սարքավորումների կառավարում և պատահարների հետաքննում:

գ. Մասնագիտական խորհրդատվության տրամադրում ՀԱԿ-ի տնօրենին, Գործառնությունների ղեկավարին, ականագերծման գործողություններով զբաղվող կազմակերպություններին, ականագերծման գործողությունների մեջ ներգրավված այլ կազմակերպություններին և հակաականային գործունեության աջակցություն ստացաող կազմակերպություններին:

դ. Ականագերծման գործողությունների ծրագրի աշխատանքների համակարգում՝ իրենց մասնագիտությունների առնչությամբ:

ե. Մասնակցություն ականագերծման գործողությունների ազգային ծրագրի, ազգային ՀԱԶ-երի, ներքին ընթացակարգերի և այլ տեխնիկական հրատարակությունների մշակմանը, որոնք պատրաստվում են ՀԱԿ-ի կողմից:

E.4.1. ՈԱ/ՈՀ ենթաբաժին

ՀԱԿ-ի ՈԱ/ՈՀ ենթաբաժինը պետք է ստեղծված լինի Գործողությունների բաժնի կազմում՝ համակարգելու և կառավարելու ականագերծման գործողությունների ծրագրի ՈԱ/ՈՀ գործառնությունները, ինչպես նաև ականագերծման գործողությունների նախագծերը այլ ծրագրի շրջանակներում: ՈԱ/ՈՀ գործառնություններն են հավատարմագրումը՝ ներառելով ցանկացած պահանջվող ՓԳ և գնահատումը (ՈԱ), ինչպես նաև ականագերծմանը հաջորդող ստուգումները, պահուստային ռեզերվների ոչնչացման վավերացումը և ԱՎԻ-ի գնահատումը (ՈՀ):

Նշում՝ Մասնագիտացված ենթաբաժինները նույնպես աջակցում են ՈԱ/ՈՀ-ում իրենց մասնագիտությունների առնչությամբ:

ՈԱ/ՈՀ գործառնությունները կարող են իրականացվել որոշակի կազմակերպությունների կողմից, որոնք հավատարմագրվել են հենց այդ գործառնություն իրականացնելու համար կամ հենց ՀԱԿ-ի կազմում գործող մարմինների կողմից, սակայն դա կախված կլինի ծրագրի ծավալից և առկա ռեսուրսներից: Եթե առանձին կազմակերպություն է օգտագործվելու, ապա կատարյալ տարբերակում հենց այդ կազմակերպությունն էլ պետք է իրագործի ՈԱ/ՈՀ-ի բոլոր արտաքին գործառնությունները:

ՈԱ/ՈՀ ենթաբաժինը կարող է նաև պատասխանատու լինել ազգային ՀԱԶ-երի պատրաստման և կազմակերպման համար՝ Գործողությունների բաժնի ղեկավարության ներքո, ինչպես նաև պատահարների հետաքննության իրականացման համար:

E.4.2. Տեղեկությունների կառավարման և ԱՏՀ-ի ենթաբաժին

Տեղեկատվության կառավարման և ԱՏՀ-ի ենթաբաժինը պատասխանատու է տեղեկատվության կառավարման համակարգչային (IMSMA կամ նմանատիպ) համակարգի և ԱՏՀ-ի կառավարման համար, ինչպես նաև ականներին վերաբերող բոլոր զեկույցների ստացման և տվյալների շտեմարանում տեղեկությունների մուտքագրման համար: Տվյալների մուտքագրման գործընթացի ժամանակ ենթաբաժինը պատասխանատու է տեղեկությունների հավաքագրման, գնահատման, հավաստիության ստուգման և անհրաժեշտության դեպքում՝ տարածման համար:

Տեղեկությունների կառավարման և ԱՏՀ-ի ենթաբաժինը նույնպես պատասխանատու է հետևյալի համար՝

ա. Փոխգործակցություն արտաքին կազմակերպությունների հետ՝ տեղեկություններ ձեռք բերելու և փոխանակելու համար՝ ականազերծման գործողությունների և մարդասիրական կամ զարգացման այլ գործողությունների զերակայությունների աջակցելու նպատակով:

բ. Ականազերծման գործողությունների տեղեկությունների ինտեգրումն այն տեղեկությունների հետ, որոնք կարող են ազդել ականազերծման գործողություններին՝ ապահովելու արդյունավետ առաջնահերթության իրականացումը և պլանավորման նպատակների համար բավարար տեղեկությունների առկայությունը:

գ. Զեկույցների, քարտեզների և համապատասխան այլ տեղեկությունների տրամադրում՝ առաջադրանքների առաջնահերթությանն աջակցելու համար:

դ. Պլանավորում և աջակցություն աշխատանքային ծրագրերի ու առաջադրանքների անհատական ծրագրերի մշակմանն ու կազմակերպմանը:

ե. Առօրյա տեղեկությունների ամփոփում և դրա զետեղումը ծրագրի համախմբված պարբերական զեկույցներում:

Տեղեկությունների կառավարման և ականազերծման գործողությունների պլանավորման ու կառավարման ոլորտներում տեղեկությունների կառավարման ենթաբաժնի և պլանավորման ու ընթացիկ գործողությունների ենթաբաժինների միջև սերտ համագործակցությունը կարևոր է:

E.4.3. Աջակցություն տուժածներին

Կախված ականազերծման գործողությունների ծրագրի պահանջներից՝ ՀԱԿ-ի գործողությունների բաժնի կազմում մի ենթաբաժին կարող է ստեղծվել՝ մոնիտորինգ իրականացնելու և համակարգելու հակաականային գործունեության այն կազմակերպությունների աշխատանքները, որոնք տուժածներին աջակցություն են ցուցաբերում: Այնուամենայնիվ, աջակցությունը տուժածներին, սովորաբար, ավելի հավանական է կազմակերպվի արտաքին (UNICEF կամ նմանատիպ) կազմակերպության կողմից և այնպիսի ծավալով, որ աջակցությունը տուժածներին ընդգրկի ոչ միայն ականների պատահարներից տուժածներին, այլև այլ պատահարներից:

E.4.4. Համայնքային փոխգործակցություն

Համայնքային փոխգործակցությունն առանձնացվել է ԱՎԻ-ից, քանի որ փոխգործակցությունը կրթության մի առանձին գործառույթ է, չնայած միևնույն կազմակերպությունները կարող են իրականացնել այդ երկու գործառույթները: ՀԱԿ-ի կազմում մի առանձին ենթաբաժին կարող է ստեղծվել՝ ականազերծման գործողությունների վերաբերյալ փոխգործակցության գործառույթները կառավարելու կամ իրականացնելու նպատակով, սակայն որոշ դեպքերում հակասականային գործունեության կազմակերպությունները կարող են ինքնուրույն իրականացնել փոխգործակցության իրենց գործառույթները:

Համայնքային փոխգործակցության ենթաբաժնի պարտականությունը կլինի փոխգործակցություն իրականացնել ականներից տուժած համայնքների հետ՝ ականազերծման գործողություններից առաջ, դրանց ընթացքում և հետո: Համայնքային փոխգործակցություն կարող է տեղի ունենալ հետևյալ դեպքերում՝

- a) Ցանկացած հետազոտության գործողությունների ընթացքում, որոնք իրականացվում են որպես ՀԱԳԸԳ գործընթացի մի մաս:
- b) Փոխգործակցություն նախքան ականազերծման բուն գործողությունների իրականացումը, որպեսզի ականներից տուժած համայնքների կարիքներն ընդգրկված լինեն ականազերծման գործողությունների առաջնահերթության և պլանավորման մեջ:
- c) Որպես ականազերծման տարածքի նախապատրաստման աշխատանքների մի մաս, որպեսզի ականներից տուժած համայնքները տեղեկացված լինեն ականազերծման նախատեսվող գործողությունների մասին, ինչպես նաև աշխատանքների հետ կապված ցանկացած վտանգների, կիրառվելիք ահազանգման համակարգերի, սովորական գործողությունների ընդհատումների և փոխգործակցության ընթացքում իրականացվող գործողությունների մասին:
- d) Առօրյա փոխգործակցություն ականազերծման ընթացիկ գործողություններին զուգահեռ՝ համայնքներին տեղեկացնելու առաջընթացի մասին, խնդիրներ լուծելու և քննարկումների համար ֆորում տրամադրելու նպատակով:
- e) Իրավիճակային փոխգործակցություն, երբ հասարակության անդամների կողմից ականներ կամ ՊՊՄ-ներ են հայտնաբերվում:
- f) Փոխգործակցություն որպես ընդունման-հանձնման առաջադրանքի մի մաս:
- g) Փոխգործակցություն որպես ականազերծմանը հաջորդող ցանկացած վերանայման մի մաս:
- h) Առօրյա փոխգործակցության ցանկացած այլ տեսակ՝ ականներից տուժած համայնքների և ՀԱԿ-ի կարիքները հոգալու համար:

Կախված ՀԱԿ-ի պահանջներից՝ համայնքային փոխգործակցության գործառույթը կարող է որպես մի մաս ընդգրկվել ԱՎԻ-ի ենթաբաժնում, սակայն իրականացվող գործառույթները (ինչպես արդեն նշվել է) պետք է անփոփոխ մնան:

E.4.5. Ականների վտանգի մասին իրազեկում (ԱՎԻ)

ԱՎԻ-ի ենթաբաժին պետք է ստեղծվի գործողությունների բաժնի վերահսկողության ներքո՝ ծրագրի շրջանակներում գործող ԱՎԻ կազմակերպությունների գործողությունները կազմակերպելու և համակարգելու համար: ԱՎԻ-ն և ականագերծման գործողությունները պետք է սերտորեն փոխկապակցված լինեն՝ ապահովելու, որ այդ գործողություններից ստացված տեղեկություններն առկա լինեն հետագա առաջադրանքների առաջնահերթությունը որոշելու և պլանավորելու համար:

E.4.6. Պլանավորում և ընթացիկ գործողություններ

Այս երկու ենթաբաժինները պատասխանատու են ականագերծման (և անհրաժեշտության դեպքում պահուստային ռեզերվների ոչնչացման) բոլոր գործողությունների պլանավորման, համակարգման և կազմակերպման համար՝ գործողությունների բաժնի վերահսկողության ներքո և ՀԱԿ-ի մասնագիտացած ենթաբաժինների հետ համակարգելով: Գործառնությունները բաշխվում են հետագա և ընթացիկ գործողությունների պլանավորման, սակայն դրանք շատ սերտորեն փոխկապակցված են և կարող են մի մարմնի կողմից իրականացվել՝ կախված ՀԱԿ-ի ռեսուրսներից:

Բնորոշ պարտականություններն են՝

- a) Պլանավորում՝ Ականների վտանգի մասին իրազեկում աշխատանքային ծրագրերի մշակում, առանձնահատուկ առաջադրանքների պլանավորում, ականագերծման առաջադրանքների բաշխում, առաջադրանքների համար մասնագիտացված աջակցության համակարգում և աշխատանքային ծրագրերի առաջընթացի մոնիտորինգ: Պլանավորման ենթաբաժինը կարող է վերահսկել նաև ծրագրի տեխնիկական հետազոտության բաղադրիչը:
- b) Ընթացիկ գործողություններ՝ ականագերծման ընթացիկ գործողությունների վերահսկում, ականագերծման գործողություններով զբաղվող կազմակերպությունների միջև հանձնման-ընդունման կազմակերպում, մասնագիտական աջակցության շարունակական համակարգում, առաջադրանքների առաջընթացի մոնիտորինգ, առաջադրանքներում կատարված փոփոխությունների կառավարում, (տարածքների մաքրման) առաջադրանքների հանձնում-ընդունում, արագ արձագանքման առաջադրանքների կառավարում և առօրյա առաջադրանքների զեկուցման կազմակերպում:

Այս պարտականություններն իրականացվում են գործողությունների բաժնի վերահսկողության ներքո և տեղեկատվության կառավարման ու համայնքային փոխգործակցության ենթաբաժինների հետ սերտ համագործակցությամբ:

E.4.7. Ականներ հայտնաբերող շներ (ԱՀՇ), մեխանիկական և պահուստային ռեզերվների ոչնչացում

Կախված ականագերծման գործողությունների ծրագրի պահանջներից ԱՀՇ, մեխանիկական և պահուստային ռեզերվների ոչնչացման մասնագիտացված այս ենթաբաժինները կարող են ստեղծվել գործողությունների բաժնի կազմում՝ ծրագրի շրջանակներում կառավարելու և համակարգելու այդ գործողությունները:

E.4.8. Կապի կենտրոն

ՀԱԿ-ի կազմում կապի կենտրոն կարող է ստեղծվել որպես ականագերծման գործողությունների ազգային հաղորդակցության ցանցի վերահսկողության ցանցային կայան: Ազգային ցանցը պետք է կապ հաստատի ՀԱԿ-ի կողմից հիմնադրված տարածաշրջանային գլխամասային ցանկացած գրասենյակի հետ, ինչպես նաև ականագերծման գործողությունների բոլոր կազմակերպությունների գլխամասային գրասենյակների հետ: Ազգային ցանցը կարող է նաև ապահովել ՀԱԿ-ի, ինչպես նաև ՀԱԿ-ի հետ ուղղակիորեն աշխատող ցանկացած կազմակերպությունների ներքին հաղորդակցությունը, օրինակ՝ ՈԱ/ՈՀ կազմակերպություն: Հաղորդակցման միջոցների մեծ տեսականի կարող է ներգրավված լինել:

E.5. Օժանդակ ծառայություններ

Օժանդակ ծառայությունների բաժինն իրականացնում է թիկունքի, անձնակազմի և վարչարարական գործառույթներ: Կախված ՀԱԿ-ի չափերից և դրա աջակցման պահանջներից՝ կարող են առանձին ենթաբաժիններ առկա լինել՝ տարբեր գործառույթներ վերահսկելու, կամ էլ մեկ բաժինը կարող է իրականացնել այդ բոլորը: Օժանդակ ծառայությունների բաժինները կարող են վերահսկել նաև ֆինանսական ենթաբաժինը, որը ծրագրային ֆինանսների ցանկացած անհրաժեշտ կառավարումն է իրականացնում:

E.5.1. Թիկունքի ենթաբաժին

Տվյալ ենթաբաժինը պատասխանատու է գնումների, պահեստավորման, հաշվապահության և ՀԱԿ-ի գործողությունների օժանդակ սարքավորումների և ապրանքների սպասարկման համար, այդ թվում նաև մեքենաներ, համակարգչային և տեխնիկական սարքավորումներ: Այս ենթաբաժինը պատասխանատու պետք է լինի նաև ՀԱԿ-ի կողմից օգտագործվող կամ վերահսկվող շենքային պայմանների վերահսկման և սպասարկման համար, որոնք կարող են ներառել (ազգային և տարածաշրջանային) գրասենյակային հարմարություններ, վերապատրաստման հարմարություններ, պայթուցիկ նյութերի պահեստավորման հարմարություններ, ՊԶ-ների ոչնչացման տարածքներ և փորձարկման տարածքներ:

Եթե ՀԱԿ-ն ուղղակիորեն է վերահսկում ականագերծման իր սեփական գործողությունները, ապա թիկունքի ենթաբաժինը պատասխանատու պետք է լինի այդ գործողությունների համար ականագերծման սարքավորումների գնման համար: Սա կարող է ներառել նաև ականագերծման գործողությունների սարքավորումների գնման համար առանձնահատուկ ընթացակարգերի մշակում՝ ըստ ՀԱԿՄՉ-երի 03.10-03.40 շարքի:

E.5.2. Անձնակազմ/Վարչարարություն

Այս ենթաբաժինը պատասխանատու է անձնակազմի և վարչարարության առօրյա կազմակերպման համար՝ ՀԱԿ-ին աջակցելու նպատակով: Այն ներառում է այնպիսի կետեր, որոնք են համալրում, անձնական պայմանագրեր, աշխատավարձերի և նպաստների, արձակուրդների, գործուղման, սոցիալական ապահովության, առողջապահության վարչարարություն, փաստաթղթերի վերարտադրման ծառայություններ և փաստաթղթերի կազմակերպում/արխիվացում: Եթե չեն կիրառվում անձնակազմի վարչարարության գերիշխող ընթացակարգերը, ապա այս բաժնից կարող է անձնակազմի կառավարման և վարչարարության ընթացակարգերի մշակում պահանջվել:

E.5.3. Ֆինանսներ

Այս ենթաբաժինը պատասխանատու է ականագերծման գործողությունների ծրագրին հատկացված ֆինանսների առօրյա կառավարման համար, իսկ ծրագրային բյուջեի ընդհանուր կառավարումը ՀԱԿ-ի տնօրենի պարտականությունն է: Ֆինանսների ենթաբաժինը պատասխանատու է այնպիսի խնդիրների համար, ինչպիսիքն են առօրյա/սովորական վճարումները (աշխատավարձեր, վարձակալության գումարներ, կոմունալ վճարումներ և այլն), ֆինանսական հաշվապահություն, առօրյա ֆինանսական հաշվետվություն և բյուջետավորում: Եթե չեն կիրառվում ֆինանսական գերիշխող ընթացակարգերը (օրինակ՝ ՄԱԿ-ի կամ ազգային ֆինանսական ընթացակարգեր), ապա այս բաժնից կարող է ֆինանսների կառավարման ընթացակարգերի մշակում պահանջվել:

E.5.4. Օժանդակ այլ գործառույթներ

Օժանդակ ծառայությունների բաժինը կարող է նաև վերահսկել վարորդներին կամ թարգմանիչներին, որոնք աջակցում են ՀԱԿ-ին, չնայած թարգմանիչները կարող են վերահսկվել նաև ծրագրային աջակցության բաժնի կողմից:

Փոփոխությունների գրանցում

ՀԱԳՄՉ-երում կատարվող փոփոխությունների կազմակերպում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական հանգամանքներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցումը, մինչև նոր վերանայում իրականացվի: ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխությունները այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում www.mineactionstandards.org:

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ